

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Իմամ Խոմեյնիի քաղաքական, հասարակական, մշակութային եւ կրոնական աշխարհայացքը»

"دیدگاههای امام خمینی در مسائل سیاسی، اجتماعی، فرهنگی و دینی"

ԻԻՀ դեսպանատան
մշակույթի կենտրոն

رایزنی فرهنگی سفارت
ج.ا. ایران در ارمنستان

Հայ-իրանական «Սիհր»
մշակութային ակումբ

باشگاه فرهنگی
ارمنستان ایران "مهر"

Երեւան 2003

تابستان ۱۳۸۲

9(55)
Գ-43

Իմամ Խոմեյնու կյանքն ու գործունեությունը

Իմամի ծնունդը և նրա ներգաղթը դեպի Ղոմ

1902թ. երկրորդ կեսին Իրանում լույս աշխարհ եկավ մի այնպիսի անձնավորություն, որը հետագայում, իրականացնելով մի աստվածային հեղափոխություն, հիմնովին փոխեց Իրանի և իսլամական աշխարհի ճակատագիրը, մի հեղափոխություն, որն առաջին իսկ օրվանից բախվեց աշխարհի գերտերությունների և, մանավանդ, ազատության ու անկախության ձգտող ազգերի թշնամիների բուռն դիմադրությանը: Սակայն, Աստծո կամոք, նրանց երկարաշունչ պայքարն ընդդեմ այս մեծ գործի և նրա առաջնորդի վեհ գաղափարների, պսակվեց պարտությամբ, իսկ Իմամի հեղափոխությունը դեռ կենդանի է ու կենդանի էլ կմնա:

Այո՛, 1920թ. սեպտեմբերի 24-ին, Խոմեն քաղաքում, մի կիրթ ու բարեպաշտ ընտանիքում, լույս աշխարհ եկավ մի այնպիսի էակ, որին հետագայում աշխարհը ճանաչեց Ռուհ-Օլլահ և Իմամ Խոմեյնի անվամբ:

Իմամը (Ուղի) հինգ ամսականում ճաշակեց որբության դառնությունը և ամբողջ հասակով կանգնեց «նահատակություն» հասկացության դեմ-դիմաց: Տասնհինգ տարեկանում, ճակատագրի քմահաճությամբ, նա զրկվեց նաև իր բարեպաշտ մոր և հորաքրոջ խնամակալությունից: Ռուհ-Օլլահը, որը մանուկ հասակից օժտված էր արտակարգ խելամտությամբ, իր նախնական հոգևոր կրթությունն ստացավ ծննդավայր Խոմեյնի գիտնականների, հատկապես, հարգարժան ավագ եղբոր՝ Այաթ-Օլլահ Փասանդիդեի հետ, և 1919թ. տեղափոխվեց Արաք քաղաքի ճեմարանը:

4650

Իմամի վերադարձը Ղոմ, կրթության շարունակությունը և իսլամագիտության դասավանդումը

Իմամը Ղոմ վերադարձավ անմիջապես Մեծն Այաթ-Օլլահ Հայերիի Ղոմ մեկնելուց հետո և իր բարձրագույն ուսումը շարունակեց նրա և Ղոմի մյուս գիտնական-աստվածագետների՝ Սեյդ Մոհամմեդ Թաղիի, Եսրեիի և ... մոտ:

Իմամը բացի աստվածաբանությունից ուսումնասիրել է նաև այլ գիտություններ՝ մաթեմատիկա, աստղագիտություն, փիլիսոփայություն, էռֆան, արևմտյան փիլիսոփայություն, բարոյագիտություն, տեսական և գործնական էռֆան և այլն:

Այաթ-Օլլահ Հայերիի մահվանից հետո, Իմամի և նրա ընկերների ջանքերի շնորհիվ Այաթ-Օլլահ Բորուջերդին ստանձնեց Ղոմի ճեմարանի տնօրենի պաշտոնը: Այդ օրերին Խոմեյնին, որպես հմուտ մանկավարժ և իսլամական իրավագիտության բարձրաստիճան և ազդեցիկ կրոնավոր, մեծ համբավ էր վայելում: Այսքանով հանդերձ նա երբեք չէր ձգտում իշխանության և իրեն համարում էր Իսլամի և ժողովրդի ծառա: Նա տարիներ շարունակ Ղոմի ճեմարանում դասավանդում էր իսլամական իրավագիտություն և փիլիսոփայություն: Տասնչորս տարի դասավանդել է նաև Նաջաֆ քաղաքի աստվածաբանական ճեմարանում:

Իմամ Խոմեյնին պայքարի և ապստամբության խրամատներում

Գաղափարական, հասարակական և քաղաքական հայացքները դեռ վաղ հասակից էին արմատավորվել Իմամ Խոմեյնիի հոգում: Չարության դեմ մարտնչելու և Աստծո ճանապարհին սրբազան պայքար մղելու ոգին Իմամի մոտ սկսվել են երիտասարդ հասակում և նրա գիտական մակարդակի ու Իրանի քաղաքական ու հասարակական իրավիճակի զարգացման հետ զուգահեռ, շարունակվել են մինչև այն պահը, երբ անհրաժեշտություն առաջացավ ղեկավարել հոգևոր ապստամբությունը:

Այսպիսով, 1963թ. Խորդադ ամսվա 15-ին հիմք դրված հոգևորականների և Իրանի ժողովրդի համընդհանուր շարժումը՝ երկու առանձնահատկություններով (Իմամ Խոմեյնու միանձնյա առաջնորդություն և իսլամական ուղղվածություն) մի նոր էջ բացեց Իրանի ժողովրդի պայքարի պատմության մեջ, որը հետագայում ստացավ «Իսլամական հեղափոխություն» անվանումը:

1963թ. Ֆարվարդին ամսվա երկուսին, որը պատահաբար համընկել էր Իմամ Սադեղի նահատակման տարելիցի հետ, շահի գործակալները զգեստափոխված խցկվեցին Ֆեյզիե դպրոցը և անմարդկայնորեն սպանեցին մի շարք հոգևոր ուսանողների: Ֆարվարդին 12-ին Խոմեյնին Ղոմի և Նաջաֆի մի խումբ աստվածաբան-գիտնականների լուռ և ծպտյալ կեցվածքի դեմ սաստիկ բողոքեց. «Լռությունն այսօր հավասարազոր է բռնակալ ռեժիմի հետ համագործակցության»:

Իմամ Խոմեյնին գիտակցաբար էր ընտրել այս ուղին: Նրա պայքարը լոկ շահի ռեժիմի տապալումը չէր, այլ կրոնական և աստվածապաշտական ռեժիմի հաստատումը, և այս գաղափարի մեջ, որը հետագայում հաստատվեց և՛ բարեկամների, և՛ թշնամիների կողմից, մնաց անսասան:

1963 թվականի Մոհառամ ամիսը (մուսուլմանների սգո ամիսն է), որը համընկել էր Խորդադ ամսվա հետ, վրա հասավ: Իմամ Խոմեյնին օգտվելով այս բարենպաստ առիթից, ժողովրդին, ընդդեմ շահի բռնակալ դիրքորոշման, առավել համախմբման կոչ արեց: Ժողովուրդը ոտքի ելավ, հավաքվեց շահի «Մառմառ պալատի» դեմ և բացականչեց. «Մահ բռնակալին»: Աշուրային օրը Խորդադի 13-ին՝ Աշուրային օրը (Իմամ Հոսեյնի նահատակման օրն է) Խոմեյնին Ֆեյզիե դպրոցում մի բոցաշունչ և արյունալի ելույթ ունեցավ: Դրան հետևեց Խորդադի տասնհինգի ապստամբությունը: Այդ պատմական ելույթում նա, ամբողջովին մերկացնելով շահի կործանարար ու ծածուկ կապերը Իսրայելի հետ, նրան կոչ արեց. «Աղա՜, ես քեզ հորդորում եմ: Ո՞վ պարոն շահ, ո՞վ հարգելի շահ, ես հորդորում եմ քեզ, վերջ տուր քո բռնած գործերին, Աղան քեզ խաբում է...»: Սույն ելույթը ծանր հարված էր շահին և հենց այդ պատճառով էլ նա հրամայեց լռեցնել Իմամին: Շահի գործակալները կեսգիշերին նրան ձերբակալեցին և տեղափոխեցին Թեհրան: Խորդադի տասնհինգի առավոտյան Իմամի ձերբակալման լուրը հասավ Թեհրան, Մեշհադ, Շիրազ և այլ քաղաքներ: Նույն վիճակը տիրեց նաև նշված քաղաքներում: Ժողովուրդը Վարամինից և Թեհրա-

նի շրջապատում գտնվող մյուս ավաններից շտապեցին դեպի մայրաքաղաք: Շահն իր ողջ հնարավորություններով փորձեց խեղդել խորհրդարաններին, Խորդադի տասնհինգին արյուն հեղվեց, սակայն նա չէր պատկերացնում, որ ժողովրդական այս շարժումը մի քանի տարի հետո վերածվելու է ահեղ հեղափոխության և հիմնահատակ տապալելու է իր ռեժիմը: Շահը, ենթադրելով, որ Խորդադյան դեպքերը այլևս չեն կրկնվելու, 1964 թվականի Ֆարվարդինի 18-ին, առանց նախազգուշացնելու, Խոմեյնուն ազատ արձակեց: Ազատությունից երեք օր հետո Խոմեյնին իր հերթական ելույթում ասաց. «Այսօր տոնակատարությունները իմաստ չունեն: Քանի դեռ ժողովուրդը կենդանի է, Խորդադի տասնհինգի ողբերգության առթիվ պիտի սգա»:

«Խորդադի տասնհինգի» առաջին տարելիցին Իմամը և մի խումբ բարձրակարգ հոգևորականներ բազմաթիվ ելույթներ ունեցան: Խոմեյնին, շարժման նպատակներին հետամուտ լինելու կապակցությամբ, հոգևորականներին առաջարկեց ամբողջ երկրով մեկ կազմակերպել շաբաթական համընդհանուր խորհրդաժողովներ, որպեսզի հնարավոր լինի ժողովրդական շարժումն էլ ավելի կազմակերպված ղեկավարել:

Իմամ Խոմեյնիի ապստամբությունն ընդդեմ կապիտուլյացիայի վերականգնման և նրա արտաքսումը Թուրքիա

Փեհլևիի ռեժիմը, որը հաստատակամորեն և հլու հնազանդ իրականացնում էր թելադրված բարենորոգումների շարանը, ձեռնամուխ եղավ կապիտուլյացիայի օրենքի նախագծի հաստատմանը և ուղարկեց մեջլիս: Սույն օրենքը, որ Իրանում ամերիկահպատակ դիվանագետների քաղաքական անձեռնմխելիությունն էր ենթադրում, նման էր մի կրակոցի, որը շահի դրածո սենատի և խորհրդարանի կողմից արձակվեց Իրանի կիսանկախ դիրքերի վրա: Այս միջադեպը ստիպեց Խոմեյնուն ավելի հաստատակամորեն իրականացնել իր պատմական առաքելությունը ու կրկին անգամ դիմեց ապստամբության, և նույն թվականի Աբան ամսվա չորսին (շահի ծննդյան օրն է), բացահայտելով նշված օրենքի հետևանքները, հանդես եկավ ելույթով: Գիտնականներից ոմանք լռեցին, իրենց գաղափարակիցներին նաև հորդորեցին, որ այս անգամ չարձագանքեն Խոմեյնու կոչին: Ռեժիմը զգալով վերահաս վտանգը և այն, որ այլևս ի վիճակի չէ կանխելու Խոմեյնուն, որոշեց աքսորել նրան: Շահի գործակալները 1964 թվականի Աբանի 13-ին կրկին անգամ շրջապատեցին Խոմեյնու բնակարանը և նրան, Ղոմից ուղիղ տեղափոխելով «Մեհրաբադ» օդանավակայան, ռազմական ինքնաթիռով ուղևորվեցին դեպի Անկարա: Խոմեյնու աքսորման լուրը կրկին անգամ բողոքի հզոր ալիք բարձրացրեց ժողովրդի մեջ:

Խոմեյնին տասնմեկ ամիս մնաց Թուրքիայում: Այս ընթացքում շահը Իրանում մնացած դիմադրողների բանակը խստորեն տապալեց և Իմամ Խոմեյնու բացակայության պայմաններում, արագորեն, ձեռնամուխ եղավ մի շարք ամերիկամետ բարեփոխումների:

Իմամ Խոմեյնու աքսորումը Թուրքիայից Իրաք

1965թ. Միհր ամսի 13-ին Իմամ Խոմեյնին իր որդու Հաջի Աղա Մուստաֆայի հետ միասին աքսորվեց Իրաք: Տասներեքամյա սույն աքսորն իր ճնշումներով ու սահմանափակումներով, թեև, նվազ դաժան էին, քան Իրանում և Թուրքիայում եղած ժամանակաշրջանը, սակայն խանգարիչ և ստորացուցիչ հանգամանքները շատ հաճախ հավասարակշռությունից հանում էին համբերատար առաջնորդին: Խոմեյնին անձամբ պայքարի այս փուլը շատ դառնությամբ է նկարագրել: Իսկապես, նա Իրաքի Նաջաֆ քաղաքում էլ չէր դադարեցրել պայքարը և ամեն մի պատեհ առիթի դեպքում իսլամապաստ հայտարարություններ էր անում: Օրինակ, իրաքահրայելական վեցօրյա պատերազմից հետո նա կտրականապես կոչ արեց իրաքցիներին՝ իսրայելական ապրանքներ չօգտագործել, և այս կոչը որոշակիորեն մթագնեց նոր թափ առած իրանահրայելական հարաբերությունները:

Իմամը Նաջաֆում եղած ժամանակ, քաղաքականությամբ զբաղվելուց բացի, դասախոսություններ կարդալով աշխուժացրեց Նաջաֆի գիտական մթնոլորտը: Այդ ընթացքում Իմամի համախոհները նույնպես չդադարեցին պայքարելուց: Նրանցից երկուսը՝ Այաթ-Օլլահ Սահիդին և Այաթ-Օլլահ Ղաֆարին, նույնիսկ, զոհվեցին պայքարի ընթացքում: Պլյուս դրան, տվյալ տասներեք տարիների ընթացքում մի

շարք մուսուլմանական կազմավորումներ ձևավորվեցին, այդ թվում, յոթնյակ խմբավորումները, որոնք հետագայում միավորվեցին և ստացան «Իսլամական Հեղափոխության Մոջահեդին կազմակերպություն» անվանումը, և նահատակ Անդարզգուի «Հոգևոր ռազմիկների» խմբավորում անունը: Այս բոլորը մահապարտների ջոկատների և «Իսլամական Ազգերի Կուսակցության» հետ միասին ոտքի ելան պաշտպանելու Իրանի շարժումը: 1969 թվականից հետո անվանի գիտնականներ Մոթահարիի, դոկ, Մոհաթեֆի, դոկ. Ալի Շարիաթի և մյուսների դասախոսություններն ու քարոզները, Հոսեյնիե կրոնական կենտրոնում, արժանացան լայն խավերի, հատկապես, երիտասարդների և ուսանողների ուշադրությանը:

Իսլամական Հեղափոխության վերելքը և ժողովրդի ապստամբությունը

Իմամ Խոմեյնին ուշի ուշով հետևելով Իրանի ու աշխարհի անցուդարձին՝ 1969թ. Մորդադ ամսվա սկզբում մի նոր ուղերձ հղեց ժողովրդին, իսկ Հաջ աղա Մոստաֆայի զոհվելուց հետո հոգևորականների ապստամբությունը նոր թափ ստացավ: Այդ նույն թվականին թերթերում զետեղված դատապարտելի ու ստորացուցիչ հոդվածն ընդդեմ Իմամի, բողոքի աննախադեպ ալիք բարձրացրեց երկրում, և հատկապես Ղոմի հոգևոր շրջանակներում, որն էլ մեծ թվով զոհերի ու արյունահեղության պատճառ դարձավ: Ղոմի նահատակների քառասունքին Թավրիզն ամբողջությամբ ոտքի ելավ և հեղափոխության ծիլերն իր արյամբ ոռոգեց: Շարժումը հետզհետե տարածելով վերածվեց համընդհանուր ապստամբության:

Իմամի գաղթը Իրաքից Փարիզ

Հեղափոխության հասունացումն ու ժողովրդական ապստամբության հետագա զարգացումը կանխելու համար 1978 թվականի Միհր ամսվա երկուսին Իմամի բնակարանը Նաջաֆում շրջապատեցին: Միհրի 12-ին Իմամը Նաջաֆից մեկնեց Քուվեյթ: Քուվեյթի կառավարությունը, սակայն, արգելեց նրան վայրէջք կատարել: Ստիպված թռավ Փարիզ և հաստատվեց Նոֆել լո Շատո ավանում և այնտեղից սկսեց ղեկավարել հեղափոխությունը: Իմամի Փարիզում եղած ժամանակ տվյալ ավանը, ինչպես նաև Փարիզը չորս ամիս շարունակ համարվում էին աշխարհի լրատվական ամենակարևոր կենտրոնները: Իրանում մեկը մյուսի հետևից փոխվում էին կառավարությունները: Բախտիարի կառավարության ժամանակ շահը թողեց Իրանը:

Միլիոնանոց և ընդարձակ քայլարշավները հանրահավաքները, որոնք կազմակերպվեցին Թասուա և Աշուրա սգո տոների կապակցությամբ, որակվեցին որպես «ոչ պաշտոնական հանրաքվե ընդդեմ շահի թագավորության»:

Իմամի վերադարձն Իրան, տասնչորս տարի հետո, Բահման 1978թ.

Իրանի ժողովուրդն արդեն սպասում էր Իմամ Խոմեյնու գալստյանը: Վերջապես 1978թ. Բահմանի տասներկուսին նա ժամանեց Թեհրան և անձամբ սկսեց ղեկավարել շարժումը: Կարճ ժամանակամիջոցում Բախտիարի կառավարությունը, ինչպես նաև Փեհլևիների փտած թագավորությունը, որն իր թիկունքում ուներ 2500-ամյա պատմություն, տապալվեց, և նույն թվականի Բահմանի 22-ին (փետրվար 12) Իրանի Իսլամական Հեղափոխությունը պսակվեց հաջողությամբ:

Իմամի կյանքի վերջին տարիները

Իմամի կանքի վերջին օրերը նշանավորվեցին, նախ, Այաթ-Օլլահ Մոնթազերիի, որպես առաջնորդի տեղապահի, գահընկեցմամբ, քանզի նա, այն ինչ պետք է ձոներ արդեն ձոնվել էր և դրա հետ զուգահեռ, հանուն իր նպատակների իրականացման, նվիրաբերել էր իր ողջ ունեցվածքը: Այնուհետև, 1989 թվականին, սպասում էր իր ամենահարազատին, որին ամբողջ կյանքում իր ուշադրությանն էր արժանացրել և ձգտել էր գոհացնել նրան, իսկ նա էլ իր հերթին, բացի իրենից, ոչ մեկի առաջ մեջք չէր ծռել: Որպես ավարտ, հարկ է նշել, որ Իմամի միստիկական երգերը ծայրեծայր շաղախված են անջատումի վշտով և ՆՐԱՆ միացման քաղցով: Այժմ մոտ է այդ երանելի պահը և ինչպես ինքն է իր կտակում նշել. «Հանգիստ ու հուսալի որտով, ուրախ հոգով և վստահ առ Աստված, հարազատ քույրիկներիս և եղբայրներիս թողած, դեպի իմ հավիտենական տունն եմ մեկնում, գիտակցելով հանդերձ, որ ձեր աղոթքների բուռն կարիքն եմ զգալու»: 1989 թվականի Խորդադի չորսին Առաջնորդական Ընտ-

բյալների Մեջլիսը, Իմամի կտակն ընթերցելուց և քննարկումներից ու մտքերի փոխանակումից հետո, Այաթ-Օլլահ Խոմեյնեին ընտրեց, որպես Իմամի տեղապահ: Այաթ-Օլլահ Խոմեյնեի ընտրությամբ երկրի թշնամիները, որոնք հույս ունեին Խոմեյնիի մահվանից հետո կմարի նաև իսլամական հեղափոխությունը, տեսնելով նրա արժանիքները վերջնականապես վհատվեցին: Այն արեգակը, որ Խոմեյնիի ծննդյան հետ ծագեց Իրան աշխարհի երկնակամարում, 1989 թվականին մարեց, սակայն նրա գաղափարները և այն լույսը, որ ճառագեց իսլամական հեղափոխությամբ, հավերժ կփայլատակի ու կլցնի աշխարհի բոլոր ընչազուրկների հոգին, և ինչպես Խոմեյնեին է ասում. «Այս հողափոխությունն աշխարհում ճանաչվելու է Իմամ Խոմեյնու անվամբ»: Ցանկացած հեղափոխության արկածներով լի պատմությունը երբևիցե Բահման ամսվա տասներկուսի նման չի եղել, քանզի այս օրը մարգարեների գերդաստանից, նրանց արժանիքներով օժտված, հրաշքներով լեցուն ինչպես այաթ լույս, աշխարհ եկավ, և հրեշտակների թևերով, Իրանի ժողովրդին վեհ ու արժանապատիվ կյանք պարգևեց:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ

բացման խոսքը

Թանկագին հյուրեր, գիտաժողովի հարգելի մասնակիցներ; Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին առանձնահատուկ տեղ է գրավում մեր հարևան և բարեկամ Իրանի բազմադարյան պատմության մեջ: Նրա անվան հետ է կապված շահական ռեժիմի տապալումը և Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումը: Դա կարևոր փուլ է Իրանի նորագույն պատմության մեջ: Իմամ Խոմեյնիի գաղափարական, քաղաքական, կրոնական և մշակութային հայացքները, որոնց քննությանն է նվիրվում այսօրվա գիտաժողովը, իրենց վրա են հրավիրել մասնագետների ուշադրությունը, որոնք փորձում են բացահայտել դրանց էությունն ու դերը երկրի քաղաքական ու պետական կյանքում և իրանական հարուստ ու ինքնատիպ մշակույթի զարգացման գործում: Գիտաժողովի հարգելի մասնակիցներ, առաջին անգամը չէ, որ մենք այստեղ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում, կազմակերպում ենք գիտաժողով, նվիրված Իմամ Խոմեյնիին: Հայ գիտնականները, մեր ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և գիտական այլ կենտրոնների մասնակցությամբ, ինչպես նաև Հայաստանում ԻԻՀ դեսպանության հետ միասին 1999 թ. հոկտեմբերի 1-ին կազմակերպեցին գիտաժողով, նվիրված Խոմեյնիի ծննդյան 100-ամյակին: Այն լայն արձագանք գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանում: Իսկ դա պատահական չէր: Իրանը մեր հարևան երկիրն է: Մեր երկու պետությունների միջև հաստատվել են բարեկամական և իրավահավասար քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական հարաբերություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն մեր երկու երկրների, այլև տարածաշրջանային պետությունների համար, նպաստելով կայունության, անվտանգության և խաղաղության ամրապնդմանը: Մեր գիտաժողովը դրա ապացույցներից մեկն է: Թույլ տվեք «Իմամ Խոմեյնու քաղաքական, մշակութային, հասարակական և կրոնական աշխարհայացքը» թեմայով գիտաժողովը հայտարարել բացված և հաջողություն ցանկանալ նրա մասնակիցներին:

Երևանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան ՄՈՀԱՄԱԴ ՖԱՐՀԱԴ ՔՈԼԵՅՆՈՒ ելույթը

Շնորհակալություն հայտնելով ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանին սույն գիտաժողովի կազմակերպմանն անհրաժեշտ աջակցություն ցույց տալու համար, Մ. Ֆ. Քոլեյնին նրան շնորհավորեց Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ դառնալու առթիվ: Նա այնուհետև ասաց. «Իրավամբ, երջանկահիշատակ, լուսահոգի Իմամ Խոմեյնին 20-րդ դարի հասարակական-քաղաքական մեծագույն դեմքերից մեկն էր: Նա համաշխարհային հանրությանը ներկայացրեց առանց պատերազմի հեղափոխության նոր սահմանումը, Խոմեյնին սկիզբն էր գիտության ու հեղափոխության նոր համագործակցության և հաշտության: Իմամ Խոմեյնին միջազգային ասպարեզում բոլորին հրավիրեց արդարության նոր սահմանմանը: Նա, Իրանում ջարդելով դիկտատուրայի մեծ դևին, կոտրելով տոտալիտարիզմի պատը, տվեց քաղաքականության, գիտության և բարոյականության գործակցության նոր սահմանումը, հասարակական կյանքում արծարծելով սեկուլյարիզմի ավարտը: Բոլորս հիշում ենք, որ լուսահոգի Իմամ Խոմեյնին նամակ հղեց ԽՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին և կոչ արեց նոր սահմանումներ տալ մարդ արարածի վերաբերյալ, որպեսզի ամբողջ մարդկությունը կարողանա նորովի բացահայտել մարդու, բնության, պատմության և մարդկային հասարակության կապը: Խոսքիս ավարտին ուզում եմ շնորհակալություն հայտնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի ուղերձի կապակցությամբ, որը նա հղել է այս գիտաժողովին և մեծապես երախտապարտ եմ հայ գիտնականներին, հետազոտողներին, որոնք այս միջոցառմանն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում: Հուսով եմ, որ այս գիտաժողովը կնպաստի Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կապերի ամրապնդմանը: Շնորհակալություն»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս ԳԱՐԵԳԻՆ Բ.-ի ուղերձի ընթերցումը միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու, ՏԵՐ ԵՂՆԻԿ եպիսկոպոս ՊԵՏՐՈՍՅԱՆԻ կողմից

Աեծահարգ տիար նախագահ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, վսեմաշուք դեսպան Իրանի Իսլամական Հանրապետության Հայաստանում, հարգարժան ներկաներ, այսօր ես հաճույք և կարևոր պարտականություն ունեմ հանուն Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի փոխանցելու այսօրվա գիտաժողովին, որ վերնագրված է «Իմամ Խոմեյնու քաղաքական, մշակութային, հասարակական և կրոնական աշխարհհայացքը» Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը և նաև իր օրհնությունը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կարևորում է այսօրվա գիտաժողովը իբրև մի աստիճան այն կարևոր գործընթացին, որին մենք ականատես եղանք 20-րդ դարի հատկապես երկրորդ կեսից սկսած և որը շարունակվում է այսօր: Դա տարբեր կրոնների, տարբեր քաղաքակրթությունների երկխոսությունն է: Այսօրվա կապակցությամբ հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կարևորում է այս գիտաժողովը երեք տեսանկյունից դիտված: Առաջինը կրոնական թեքում ունի. Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցին հավատում է և ընդունում, որ աստվածային հայտնությունը, որ ուղղված է մարդուն ու մարդու փրկության համար, առկա է նաև քրիստոնեությունից դուրս այլ կրոններում: Եվ այդ հավատալիքն է, որ հնարավորություն է ստեղծել որպեսզի անցած հարյուրամյակից սկսած երկխոսություն սկսվի քրիստոնեության և տարբեր կրոնների միջև ի մասնավորի քրիստոնեության և իսլամի միջև, և հայ եկեղեցին երբեք անմասն չի մնացել այդ երկխոսությանը:

Երկրորդը մեզ համար այն է, որ այս երկխոսությունը ունի ոչ միայն կրոնական այլև ազգային շահեր հետապնդող նշանակություն:Մենք

երբեք չենք կարող մոռանալ, թե ինչպես Առաջին համաշխարհային պատերազմին և Մեծ եռեղնին հաջորդող տարիներին հատկապես իսլամական բնակչություն ունեցող երկրները հյուրընկալեցին մեր բափառական, մահվան ճիրաններից մազապուրծ զավակներին և նրանց իրենց եղբայրների նման տեղավորեցին իրենց երկրներում և իրենց մեջ:

Երրորդ կարևոր հանգամանքը վերաբերում է դարձյալ ազգային, սակայն այս անգամ ավելի կոնկրետ զուտ իրանական և հայկական հարաբերություններին: Մ.թ. I դարին իրանական և հայկական ժողովուրդները և պետությունները եղբայր պետություններ և ժողովուրդներ էին և ունեին նույն մշակույթը և նույնիսկ նույն թագավորական տունը երկու երկրներում: Երրորդ դարից սկսած անշուշտ վիճակը փոխվեց, երբ Իրանում Սասանյան դինաստիան անցավ իշխանության գլուխ և զրադաշտականությունը դարձավ պետական կրոն, երբ Հայաստանում քրիստոնեությունը քիչ ավելի ուշ դարձավ պետական կրոն և այնուհետև Իրանում իսլամը դարձավ երկրի տիրապետող կրոնը: Սակայն 20-րդ դարի վերջին տարիները ապացուցեցին, որ երկու երկրների, երկու ժողովուրդների և երկու պետությունների եղբայրությունը, որ ամրագրված էր մ.թ. 1-ին դարերում և որը որոշ ժամանակ կարծեք քնած էր, սակայն երբեք չէր վերացել և այսօր չափազանց այժմեական է մեզ համար: Ահա այս երեք կարևոր նկատառումներով ես կրկին անգամ հանուն Վեհափառ Հայրապետի ողջունում եմ ձեզ բոլորին՝ այսօրվա գիտաժողովի մասնակիցներին և մաղթում հաջողություն և հղում Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական մարմնի տնօրեն, Գերաշնորհ ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս ՊՈՂԱՊԱՐՅԱՆ. «Իմամ Խոմեյնու դերը ԻԻՀ կազմության ճանապարհին»

Ուրտագինս ողջունում եմ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ պրն. Ֆադեյ Սարգսյանին, վսեմաշուք դասպանին ԻԻՀ-ի Հայաստանս և բոլոր ներկաներին, որոնք այսօր եկած են այս կլոր դահլիճի մեջ Իմամ Խոմեյնու գիտաժողովին մասնակցելու համար:

Իմամ Խոմեյնին լուսահոգի կոչվեց քիչ առաջ, և մենք բոլորս ընդունում ենք այն, որովհետև Իմամ Խոմեյնու անձի հետև տեսնում ենք մի փառավոր անցյալ, մի փառավոր գործունեության շրջան, մի փառավոր տեսիլքի իրականացում, որ միայն աստվածային շնորհքների միջոցով հնարավոր է իրագործել այս աշխարհում: Նա Ղոմի մեջ ծնված, իր գիտելիքները ստացած և հանուն ժողովրդի իրավունքները պաշտպանելու պայքարը սկսողն էր: Եվ այդ պատճառով աքսորվել էր իր երկրից դուրս՝Թուրքիա, Իրաք, Քուվեյթ և ապա հասել էր մինչև Փարիզ, բայց իր հեղափոխական, իր գիտական, իր ժողովրդի իրավունքների պաշտպանման գործում նա երբեք չէր զլացել, փախստյան ինքն իրեն չէր կոչել, այլ անընդհատ պայքար էր մղել, որպեսզի կարողանա իր երկիրը փրկել իշխող տերության ճիրաններից: Հեշտ չէր բնավ աշխարհականացած մի երկրի մեջ, աշխարհականացած մի աշխարհում, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհականացումը /սեքյուլարիզմը/ տիրել էր ողջ աշխարհին և պայքար մղել սեքյուլարիզմի դեմ մեծագույն պարտականություն զգաց և ամենադժվար պարտքն էր իր առջև դրված, որպեսզի կարողանար իրագործել սեքյուլարիզմի դեմ իր պայքարը: Այսօր իրանյան ժողովուրդը փառք է տալիս, որ իրանական իսլամական իշխանությունը հիմնվեց լուսահոգի և մարգարեատիպ Իմամ Խոմեյնու ջանքերով և աշխատանքով, քրտինքով և նրա երազների իրականացումը այսօր մենք տեսնում ենք : Հատկապես կրոնական բնագավառի մեջ, երբ Ի-

րանից Հայաստան այցելում են պետական բարձրաստիճան անձինք, նրանք անպայման այցելում են Սուրբ Էջմիածին, այնտեղ պատմական միածնի իջման խորանի առջև իրենց ուխտը վերանորոգելու, ինչպես նաև հայոց հայրապետների հետ տեսակցելու: Հատկապես ես հիշում եմ նրանց արտաքին գործերի մինիստր, որ եկել էր և առաջարկում էր աստվածաբանական և դավանաբանական դիալոգներ սկսելու քրիստոնեության և իսլամի միջև: Բնական է, այդ դիալոգը անցյալ դարերի ընթացքում, երբ հայ ժողովրդի մեծ մասը Շահ Աբասի կողմից փոխադրվեց Իրան, այն ժամանակվանից սկսել էր այդ դիալոգը, բայց այդ դիալոգը գործնական կետի վրա դրվեց հատկապես այս վերջին 20 տարիների ընթացքում Իմամ Խոմեյնու ջանքերով: Երբ ես հիշում եմ, թե ինչպես Իրանի թեմի առաջնորդ հանգուցյալ Արտակ արքեպիսկոպոսը գնացել էր Ղոմ այնտեղ հանդիպում ունենալու հանգուցյալ Իմամ Խոմեյնու հետ: Երկուսը ծալապատիկ նստել էին և իրար հետ զրուցել էին, թե ի՞նչ ձևով հնարավոր է աստվածաբանական դիալոգը, երկխոսությունը սկսել:

Սիրելինե՛ր, դուք գիտեք որ 1948թ. հիմնվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը քրիստոնյաներին միացնելու նպատակով, բայց այդ խորհրդի բուն նպատակը նաև բոլոր աստվածապաշտներին՝ իսլամներին, բուդդիստներին և այլ կրոնքի զավակներին քրիստոնեական եկեղեցու հետ հաշտեցնելու ջանք ստեղծելն էր և դա երկար տասնամյակներ շարունակ տեղի է ունենում, հատկապես իսլամի, մոսկիսականության և քրիստոնեության միջև, և մենք ուրախ ենք, որ ունենք այսպիսի մի փառավոր հարևան՝ իրանյան երկիր, աստվածատուր երկիր պիտի ասեմ, որ միասին որպես բարեկամ երկրածիններ կարողանում ենք հարաբերությունների մեջ մտնել և սերտացնել ոչ միայն քաղաքական, առևտրական մեր հարաբերությունները, այլ նաև կրոնական կետի վրա: Ես հաճախ այնքան ուրախ եմ զգում, երբ իրանցիները գալիս են Էջմիածին, իրենց ավտոները կանգնեցնում են բակում և ուխտավորաբար գնում են Մայր Աթոռի Մայր Տաճարը և այնտեղ հավանաբար իրենց աղոթքն են անում: Երբ այցելեցի մի քանի տարի առաջ դեսպանության հրավերով Իրան այնտեղ այցելեցի հրաշալի մզկիթներ, նաև Նոր Ջուղայի հայկական եկեղեցիներ և տեսա, թե ինչպիսի սերտ հարաբերության մեջ է հայ ժողովուրդը իրանյան հայրենիքի հայասեր ժողովրդի հետ և դա հպարտությամբ լցրեց իմ հոգին: Ես պետք չունեմ ասելու, թե այս վերջին 11-12 տարիների ընթացքում Հայաստանը, երբ շրջափակման մեջ էր, ինչպիսի օգուտ քաղեցինք այն դարպասից, որ բացվում էր դեպի Իրան, այնպիսի սիրով, եղբայրական հոգով մեզ իրենց դուռը բացեցին և մեզ բոլոր տեսակ օգնություններ հասուցին իրանյան մեր եղբայրները: Բնական է, Իմամ Խոմեյնու ոգու ներկայությունն էր և նրա ոգու շարունակությունը: Այսօր ես առանց հապաղելու պիտի ասեմ, որ լուսահոգի Իմամ Խոմեյնին 20-րդ դարի վերջին 25 տարիների ընթացքում հատկապես եղավ մարգարեատիպ մի անձնավորություն իր ժողովրդին փրկելու ճանապարհին, ինչպես նաև հայ ժողովրդի հետ և քրիստոնյա ժողովուրդների հետ իրանյան ժողովրդի հարաբերությունները բարելավվելու ճանապարհին: Թող Աստծո օրհնյալ զավակը՝ մարգարեաշունչ Իմամ Խոմեյնին հավետ ապրի իր և մեր ժողովուրդների հիշողության մեջ:

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար ԿԱՐԵՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ելույթը

Իմամ Խոմեյնին, ինչպես ճիշտ նկատվել է, իսլամը հավատքից վերածեց հասարակության զարգացման գործոնի: Հենց դրանով Իրանի Իսլամական հեղափոխությունը դարձավ դարաշրջանի ամենամեծ և աշխարհի շատ ժողովուրդների համար օրինակելի մշակութային հեղափոխություն: Այդ հեղափոխության բնույթը պայմանավորված է հոգևոր հենքով: Մարդիկ իմամների մեջ տեսան իսլամի ամբողջական գաղափարների և իրենց մշակութային և կրոնական ինքնությունը: Մարդիկ վստահեցին և սիրեցին հեղափոխության առաջնորդին, իսկ նա մոլորյալ ժողովրդին վերադարձրեց ժողովրդինը, նրա կան ու չկան, իսլամական և ազգային ինքնությունը: Իրանի Իսլամական հեղափոխության շնորհիվ փոխվեց հասարակության հոգեկերտվածքը, ուստի պարզ և ամբողջական է նրա առաջնորդի՝Իմամ Խոմեյնու տեսակետը: «Մենք եկանք այն համոզման,-ասում է Իմամ Խոմեյնին,- որ զարգացող մարդու օրենսդրությունը միայն Աստծո գործն է, ո-

րի կամքն է ստեղծել գոյատևման օրենքներ: Մարդու, ինչպես նաև հասարակության երջանկությունն ու կատարելությունը հիմնված է մարգարեների կողմից ներկայացված, մարդկությանը ներկայացված սուրբ օրենքների պահպանության վրա: Մարդու, հեղափոխությամբ ձեռք բերված ազատությունը հենց Իրանի Իսլամական Հանրապետությունում դարձավ նոր մշակութային քաղաքականության և ստեղծագործական գործունեության հիմքը: Մարդու հոգևոր անկումը և նրա թշվառությունները գալիս են նրան իրավունքից զրկելուց և մեկ ուրիշ մարդկային էակի ենթարկելուց, այդ պատճառով մենք պիտի թույլ չտանք, որ մեզ շղթայեն ու ձեռնակապանքներ հագցնեն: Պայքարե՛նք նրանց դեմ, ովքեր մեզ քշում են ստրկության և ազատենք մեզ ու հասարակությանը՝ ստանալով Աստծուն ծառայելու, նրան նվիրվելու հնարավորություն: Բնականաբար իր գործով Աստծուն ծառայող իմամը, որ իր գործով բարի, ճշգրիտ մարգարեի տեղակալ էր, չէր կարող իրեն տրված աստվածային, բանաստեղծելու շնորհով չլինել բոլոր ճշմարիտ բանաստեղծների պես Աստծու քարտուղար: Դրա վկայությունն են նրա աֆսիի ջանքով մեզ հասած նրա գողտրիկ բանաստեղծությունները: Ահա դրանցից մեկը.

Թավիշ աչքերդ, ո՛վ գինովցած յար, ինձ էլ հմայեց,
Կեռ խոպոպներդ, ո՛վ իմ գեղանի, ինձ խելքից հանեց,
Թարմ բուրաստանի ծաղկունքում չքնաղ բարեսեր նոճին
Դեռ պչրանք չարած այլ փերիներին մտքիցս հանեց:
Արբեցածները ողջ ուշակորույս չքվան, վերացան
Քո նեկտար ձեռքի գավաթի ումպը ինձ ուշքի բերեց,
Սիրուց նետահար մոլորված եմ ես, վառված ի՞նչ անեմ
Հեզ նազանքիդ հետ լալ շրթունքներդ գոհար անձրևեց
Նազելու սերը այնպես համակեց, որ ինձ հաղթական
Հարազատ տնից դուրս բերեց տարավ, կախաղան հանեց:
Սերդ դպրոցում սուֆի հավատքից կտրեց ինձ տարավ
Ստրուկի պես լուռ օղն ականջիս գինետուն բերեց:
Լեփլեցուն գինով տված գավաթդ կյանք պարգևեց ինձ
Համբույրս շեմին քո գաղտնիքներին համակիր արեց:

Այսպես է ինձ ներկայանում Իմամ Խոմեյնին՝ Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդը և բնականաբար այս ազատության պայմաններում է, որ զարգանում է Իրանի Իսլամական Հանրապետությունում մշակութային քաղաքականությունը, ուստի և այդ քաղաքականության սկզբունքները հարազատ են Հայաստանի Հանրապետությանը և դրանով է պայմանավորված մեր համագործակցությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ և այն դերը մշակութային քաղաքականության մեջ, որ տածում է Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հանդեպ:

ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր ԳԱՌՆԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ. «Իմամ Խոմեյնին՝ որպես անհատականություն»

Դ.դրդադ ամիսն էր: Այն ամիսը, որն իրանցիների և աշխարհի համայն ազատատենչ և աստվածապաշտ մարդկանց ապագայի ձևավորման հարցում խաղաց շատ ազդեցիկ և ճակատագրական դեր: Այս ամսին համընկնում են երկու խոշոր տարեթվեր, խորդադի 14 և 15, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին հիշեցնում է հեղափոխական և համաշխարհային պատմության չափազանց կարևոր իրադարձություններ և դեպքեր: Եվ հետաքրքրական է, որ այս երկու մեծ և պատմական տարեթվերը կապակցված են մեծ և պատմական մի անձնավորության հետ: Անձնավորություն, որին կարելի է առանց վարանելու անվանել աշխարհի ամենամեծ մտածողն ու հեղափոխականը: Անձնավորություն, որը հիմնեց Իրանի իսլամական հեղափոխությունն ու, Իրանի մուսուլման ժողովրդի կրոնական հակումների ճիշտ ըմբռնումով և սկզբունքային առաջնորդմամբ, այս հեղափոխությունը դարձրեց քսաներորդ դարի ամենախոշոր պատմական իրադարձությունը: Անձնավորություն, որը ղեկավարեց այնպիսի մի հեղափոխություն, որի մասին խոսելիս նախքան սպանությունների, արյունահեղության և դաժանությունների քննադատումը, նշվում են նրա բոլոր դրական և բարենորոգիչ հատկանիշները: Հեղափոխություն, որը մարդու, կրոնի և բանականության հաշտեցման առիթ հանդիսացավ, իսկ

այդ հզոր և շքեղ անձնավորությունը Իմամ Խոմեյնին էր:

Այս երկու նշանակալից պատմական օրերի հզորության և կարևորության հակիրճ ներկայացման համար, նախ պետք է հակիրճ խոսեմ խորդաղ 15-ի մասին, այսինքն՝ ժողովրդական շարժման և իսլամական շարժման վերականգնման, և իրականում, Իրանի քաղաքական և սոցիալական հետագա ճակատագրի վրա ունեցած ազդեցության մասին:

Ինչպես գիտեք, Իմամ Խոմեյնին ծնվել է 1902 թվ-ի սեպտեմբերի 24-ին Իրանի կենտրոնական մարզի Խոմեյն շրջանում, մտավորականի ընտանիքում:

Նրա հայրը՝ Սեյյեդ Մուստաֆա Մուսավին, որն իր ժամանակի պայքարող հոգևորականներից և լուսահոգի Այաթ – օլ- Ազեմի Միրզա Շիրազիի ժամանակակիցներից էր, իր իրավունքների համար մղված պայքարի արդյունքում նահատակվեց ժամանակի իշխանությունների կողմից: Իմամ Խոմեյնին մանկության և պատանեկության տարիներից լինելով ուշիմ և խելացի, նախնական կրթությունն ստացել է տեղական ուսուցիչների մոտ: Ապա գիտելիքների ընդլայնման համար սովորել է Արաքի և Ղոմի հոգևոր ճեմարաններում: Ղոմի հոգևոր ճեմարանում բավական մեծ արագությամբ կատարելագործել է իր գիտելիքներն ու դարձել փիլիսոփայության, իրավագիտության և միստիկայի հիմունքների լավագույն և ակնառու ուսուցիչներից մեկը: Դեռևս Ղոմում, երբ նա օրինակելի հոգևորական էր, ամբողջովին հասկացել էր, որ Ամերիկայի կողմից թելադրված քաղաքականությամբ առաջնորդվող փեհլևական օտարամոլ կառավարությունը մեծ դավադրություն է կազմակերպել Իրանի ժողովրդի հանդեպ և նպատակ ունի ամբողջապես իրականացնել իր «իսլամի հղկման» և իրանական մշակույթից իսլամի ոչնչացման ծրագրերը և ցանկանում է ներմուծել այնպիսի մի մշակույթ, որը արևմտամոլության և արևմտյան խորհրդանիշների կույր նմանակման մարմնացում է և երկիրն ամբողջովին կվերածի օտարների ներկայության հենակետի և կնպաստի երկրի գաղութացման: Իսկ պետության ապագա ճակատագիրն ու բոլոր շահերը անմիջականորեն կհայտնվեն արևմուտքի և Ամերիկայի ձեռքերում:

Ուստի հենց այն ժամանակվանից, նկատի ունենալով բոլոր քաղաքական ընթացքներն ու խնդիրները, նա տարբեր առիթներով հայտարարել է իր անհամաձայնությունն ու դժգոհությունը վերոհիշյալ խնդիրների շուրջ:

Իմամ Խոմեյնին իր ստեղծագործությունների առաջին ժողովածուն հրատարակել է Ռեզա շահի իշխանության վերջին տարիներին: Այս գիրքը, որը կոչվում է «Քյաշֆ Օֆ-օլ-էսրար» (Գաղտնիքների բացահայտում), իսլամական կառավարության ստեղծման մասին է: Նա Այաթոլլա Բորուջերդի համախոհն ու գործընկերն էր, իսկ Բորուջերդի մահվանից հետո, հատկապես 1962-1963 թվ-ին, սկսեց ներկայացնել ճառեր՝ ուղղված ընդդեմ փեհլևական ռեժիմի և մարդկանց ներկայացրեց ուշագրավ քաղաքական տեղեկություններ: Նա այդ իշխանությունը համարում էր անբարոյականության և ընտրական կեղծիքների տարածման, սահմանադրական օրենսդրության խախտման, մամուլի և քաղաքական կուսակցությունների գլխատման, համալսարանի անկախության ոտնահարման և որ ամենակարևորն է, մարդկանց կրոնական համոզմունքների խախտման խթան, դատապարտելով այն արևմտամետության տարածման, օտարներին «կապիտուլյացիայի» շնորհման և Իսրայելին նավթ վաճառելու համար:

Նրա պայծառ ճառերն ու հայտարարությունները շարունակվեցին մինչև 1963 թվ-ի մոհառամ (խորդաղ) ամիսը... Անձնազոհության, արիության և առասպելական ամիս, սրերի դեմ արյան հաղթանակի ամիս: Ամիս, որը պատմական բոլոր սերունդներին սովորեցրեց նիզակի դեմ հոգևոր հաղթանակի ճանապարհը: Իմամ Խոմեյնին կատարելապես նախապատրաստել էր մարդկանց ըմբոստանալու և կոչ էր անում առճակատ պայքարել ընդդեմ փեհլևական ռեժիմի: Նա Աշուրայի երեկոյան (1963 թվ. խորդաղի 13-ին) Ղոմի Ֆեյզիե ճեմարանում արտասանեց իր պատմական ելույթը, որը հանդիսացավ խորդաղի 15-ի ապստամբության սկիզբ: Եվ այս ելույթից հետո էր, որ խորդաղի 14-ի երեկոյան ձերբակալվեց և տեղափոխվեց Թեհրանի բանտերից մեկը:

Այն կրակը, որ Իմամ Խոմեյնին վառեց Իրանի կեղեքված և տանջահար մարդկանց սրտերում, առավել ոգևորեց և շահագրգռեց նրանց: 1963 թ–ի խորդաղին սկսված իրարանցումները տևեցին ընդամենը երեք օր, իրենց ետևում թողնելով հարյուրավոր, մինչև իսկ հազարավոր զոհեր և ցնցելով ոչ միայն Թեհրանն ու Ղոմը, այլև Իսպահանն ու Շիրազը, Մաշհադն ու Թավրիզը:

Իհարկե այն ժամանակ բռնապետական իշխանությունը կարողացավ սաստել փոթորիկը և Իմամին Թուրքիա և ապա Իրաք արտաքսե-

լով արտաքուստ ճնշեց մարդկանց պայքարը: Սակայն խորդադի 15-ի շքեղ և առասպելական ապստամբությունը, որը պայմանավորված էր իսլամի հանդեպ սիրո արտահայտմամբ, հետագա տարիների ընթացքում զուգակցվեց 1977 թ-ի շահրիվարի 17-ի ողբերգությունների և արյունահեղությունների հետ և, ի վերջո, 1978 թ-ի բահմանի 22-ին, չդիմանալով մարդկանց պայքարին և Իմամի առաջնորդմանը, բռնապետության դևը ծնկի եկավ:

Անկասկած, աշխարհի մարդկանց մոտ Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը տպավորվել է որպես մի անսպասելի և ցնցող իրադարձություն: Նրանցից շատերի կարծիքով իսլամն ու կրոնական համոզմունքները մեծ դեր խաղացին այս հեղափոխության մեջ և համաշխարհային հեղափոխությունների շարքում այն դարձրեցին նոր և բացառիկ երևույթ: Եվ այդ երևույթի բացահայտման և մեկնաբանության համար նրանք հայտնվում էին մոլորության և անորոշության մեջ:

Այս անորոշության և մոլորության հիմնական պատճառը կարելի է հիմնավորել երկու պարամետրերով:

Առաջին պարամետրն այն է, որ աշխարհի քաղաքական գործիչների ու վերլուծաբանների մեկնաբանություններում և վերլուծություններում Իրանի ներքին իրավիճակը գնահատելիս միակ խնդիրը, որ չէր արժանանում բավարար ուշադրության՝ իրանցիների կրոնական նվիրվածությունն էր ու անսահման սերը իսլամի հանդեպ: Սեր և նվիրվածություն, որը դարերի ընթացքում գոյություն ուներ մարդկանց սրտերում, և նրանք միշտ երազում էին Իմամ Ալիի և նրա որդիների թագավորության մասին: Եվ հենց այս պատճառով, այն հեղափոխությունը, որ միջազգային վերլուծաբանների կարծիքով արտաքուստ մի հասարակական, տնտեսական և քաղաքական շարժում էր, ի սկզբանե կրում էր կրոնական և պաշտամունքային բնույթ և վերածվեց իսլամական հեղափոխության: Իհարկե երկրորդ պարամետրը, որն այս ասպարեզում խաղաց հիմնական դերն ու մեծ ազդեցություն ունեցավ՝ դա, անկասկած, մարդկանց լուսաբանման և ժողովրդական լայն շարժումների կազմակերպման հարցում ունեցած Իմամ Խոմեյնիի որոշիչ դերն էր:

Նրա հոգևոր, գիտական և հասարակական կեցվածքը, հատկապես հասարակ ու պարզ կենցաղն ու փեհլևական ռեժիմի և բռնապետության հանդեպ նրա անհանդուրժողականությունը հանդիսացան մարդկանց կողմից սիրո և գնահատանքի արժանանալու պատճառը:

Իմամ Խոմեյնին, համառորեն խուսափում էր ամեն տեսակի սադրանքներից և պնդում, որ եթե իր իսկ որդիները կանգնեն պատժի առաջ, պետք է կրեն իրենց պատիժը հավուր պատշաճի: Նա միշտ գործել է, որպես մի աստվածային էակ, որը չէր ձգտում աշխարհիկ իշխանության, այլ պայքարում էր շարիաթի և իսլամական օրենքների վերականգնման համար: Նրա կերպարում բացառվում էր անբարոյականությունը, բռնությունը, սպառնալիքներն ու կեղեքումը և այդ իսկ պատճառով հանդիսանում էր հեղափոխական առաջնորդի մի անզուգական և գրավիչ սիմվոլ, որը քսաներորդ դարում բացառիկ և սակավ էր և անհրաժեշտ բարոյականության կարոտ հոգիներին:

Հիմա կրկին ուզում եմ անդրադառնալ 1989 թ-ի խորդադի 13-14 ցավալի իրադարձությանը: 1989 թ-ի խորդադի 13-ի երեկոյան ժամը 22:20-ին այդ աստվածային մարդու և քսաներորդ դարի ամենամեծ պատմական կերպարի կյանքի գիծն ընդհատվեց: Այդ օրը դադարեց բաբախել մի սիրտ, որը միլիոնավոր սրտերում Աստծո և բարոյականության լույս էր վառել: Նա ապրեց 87 տարի և մի կարճատև հիվանդությունից հետո արժանացավ ամբողջ կյանքում երազած երկնային արքայությանը: Նա գնաց հանդիպելու այն Սիրելիի հետ, որին նվիրել էր իր ամբողջ կյանքը, բացի նրանից ոչ ոքի համար չարտասվելով և բացի նրանից՝ ոչ մի ուժի դեմ չխոնարհվելով:

Երբ Իրանի ժողովուրդը ստացավ Իմամ Խոմեյնու մահվան լուրը, բոլորին պատեց մի անսահման վիշտ: Ոչ մի գրչով հնարավոր չէ նկարագրել նրանց հոգեկան զգացմունքներն ու վշտի տառապանքը: Աշխարհի բոլոր առաջնորդներն ու քաղաքական գործիչները, նրան կարևոր երևույթ համարելով, վշտացան և ցավակցեցին այն մարդու մահը, որը կարողացավ դարեր հետո վերականգնել իսլամի քաղաքական իշխանությունը:

Վերջում հարկ եմ համարում խոսել Իմամ Խոմեյնու քաղաքական կյանքի և անհատականության հույժ կարևոր մի կետի մասին: Իրականում ցանկանում եմ, այս մասին խոսելով, կարևորել նրա ճակատագրական և որոշիչ դերը համաշխարհային քաղաքականության մեջ և հատկապես տարածաշրջանում: Նա քաղաքական առաջնորդների

և առասպելական հերոսների կյանքին պարգևեց մի նոր իմաստ ու նշանակություն: Նման անձնավորություններ ծնվում են 100 տարին մեկ և իրենց առանձնահատկությունների շնորհիվ փոխակերպվում համաշխարհային սիմվոլների:

«Իմամ Խոմեյնուն սիրել և սիրում են աշխարհի բազմաթիվ ազատության և արդարության ձգտող մարդիկ, սակայն հնարավոր է նաև, որ մարդկանց որոշակի մի մաս չսիրի և թշնամանք տածի նրա հանդեպ: Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհի մարդիկ չեն կարող չհամաձայնել այն պարզ իրականության հետ, որ Իմամ Խոմեյնին, իր կյանքի և պայքարի ընթացքում երբեք չի վարանել և չի դավաճանել իր ուսմունքներին և իր հասարակ ու պերճանքներից զուրկ կենցաղով, անբարոյականության դրժմամբ և քաղաքական պայքարի անզուգականությամբ մեծ և արժեքավոր դաս հանիսացավ աշխարհի և հատկապես տարածաշրջանի քաղաքական գործիչների և առաջնորդների համար: Տարածաշրջանային քաղաքականության ասպարեզում նա մշակեց և պատրաստեց արժանավայել դոկտրինա և ես հուսով եմ, որ այն բոլոր առաջնորդների համար կդառնա խորհրդանիշ, հեղափոխական ու գործնական ուղեցույց:»

ԻԻՀ դեսպանության մշակույթի խորհրդական պր-ն ՄՈՀՍԵՆ ԱԲՈՒԹԱԼԵԲԻ, «Իմամ Խոմեյնին և մշակույթը»

Անկասկած յուրաքանչյուր հասարակության մշակույթ հանդիսանում է տվյալ հասարակության էության վրա հիմնական ազդեցություն ցուցաբերող ամենակարևոր գործոնը: Արմատապես, մշակույթը յուրաքանչյուր հասարակության ինքնության և էության ձևավորողն է և որքան էլ, որ հասարակությունը տնտեսական, քաղաքական, արդյունաբերական և ռազմական ասպարեզներում հզորանա, մշակույթի շեղմամբ դատարկ է ու սին: Եթե որևէ հասարակության մշակույթը կախված է օտար մշակույթներից՝ ապա ճարահատյալ, մյուս ասպարեզները նույնպես հայտնվում են օտար կախվածության մեջ: Եվ ի վերջո, այն ավերվում է և իր բոլոր ասպարեզներում դադարում է

հանդես գալ: Յուրաքանչյուր հասարակության անկախությունն ու էությունը բխում է նրա մշակույթի անկախությունից և պարզամտություն է մտածել, որ մշակութային կախվածությամբ հնարավոր է ապահովել մյուս ասպարեզների անկախությունը:

Ընդհանրապես, մշակույթն ունի դանդաղ, սակայն խոր ազդեցություն և այս առանձնահատկությունը նպաստել է, որպեսզի շատերը շեղվեն նրա կարևորությունից: Եվ իրենց և հասարակության պրոբլեմների լուծման համար սակավարդյունք, սակայն առավել արագ ձևեր են առաջարկում: Սակայն դժվարությունները կարելի է լուծել միայն մշակույթի և նրա բարեկարգման միջոցով:

Իմամ Խոմեյնին մշտապես կարևորել է մշակույթի ու նրա բարեկարգման ծրագրերի նշանակությունը: Նա համոզված էր, որ առանց մշակույթի վերափոխման յուրաքանչյուր բարեկարգման ծրագիր, մինչև անգամ քաղաքական և տնտեսական անկախությունը, չեն կարող արդյունավետ լինել: Եվ եթե ազգերը, մշակութային տեսակետից չհասնեն պատշաճ հարստության, և չհավատան իրենց և իրենց մշակույթին, կմատնվեն անկման և հետամնացության:

Նա հավատացած էր, որ հասարակության քաղաքական և տնտեսական համակարգի այլայլվածությունը պայմանավորված է մշակույթի այլայլվածությամբ, և մշակույթն է, որ հանդիսանում է մարդկանց կյանքի և ազգային պատկանելության հիմնական բազիսը: Եթե որևէ ազգի մշակույթ անկախ և բնիկ չէ, ապա ամեն տեսակի անկախություն ապարդյուն և անիմաստ է: Մտավոր անկախությունն է հանգեցնում ֆիզկական անկախության: Իմամը համոզված էր, որ սեփական մշակույթի պահպանումը պայմանավորված չէ օտար մշակույթների դրժմամբ և կարելի է օգտվել նաև օտարների լավ օրինակներից: Սակայն չպետք է պարտվել օտար մշակույթներին: Նա հավատացած էր, որ գիտությունն իր ամբողջ արժեքով և պայծառությամբ պետք է գոյատևի բարոյական դաստիարակության հետ համատեղ: Այլապես՝ այն նման է անկանխագուշակելի վտանգի ոչ միայն իր՝ այլև հասարակության համար: Նա բազմիցս խոսել է մշակույթի փոխակերպության վտանգների զանազանության, արևմտամետության և սեփական մշակույթի անտեսման մասին և մարդկանց կոչ է արել վերադառնալ սեփական մշակութային արժեքներին, որոնք հանդիսանում են երկրային

և երկնային կյանքի երջանկության գրավականը: Նա համոզված էր, որ իրական վտանգը թշնամու հարձակումը չէ, այլ մտավոր կախվածությունը:

Իմամի տեսանկյունից մշակույթն ունի երկու հիմնական կողմ: Առաջինը մշակույթի անհատական կողմն է, որը կապված է մարդու և նրա երջանկության հետ, իսկ երկրորդը՝ նրա հասարակական կողմն է, որն առկա է մարդկանց հասարակական կյանքի բնագավառում: Այսպիսով, մշակույթը մարդուն յուրահատուկ մի երևույթ է և անմիջականորեն կապված է նրա դաստիարակման և խրատման հետ: Նրա կարծիքով կառուցողական մշակույթը, անհատական և հասարակական ասպարեզներում, հանդիսանում է մարդկանց և հանրության հոգևոր դաստիարակման և խրատման դրդապատճառ: Մաշկույթի այս երկու հիմնական կողմերը իրանական-իսլամական մշակույթի համակարգի վրա հիմնավոր ազդեցություն են ունեցել: Եվ իսլամական հեղափոխությունից հետո Իրանի մշակութային բարեփոխումների ծրագիրը կարող է հանդիսանալ հասարակության հետազոտման առարկա: Անհատական ասպարեզում, Իմամ Խոմեյնին տարիների ընթացքում ստանձնեց իր և ուրիշների մշակութային կրթումն ու դաստիարակումը: Եվ ներկայիս աշխարհին ներկայացրեց հոգևոր դաստիարակությամբ մարդու մի օրինակ՝ միստիկական և բարոյական կանոնների սահմաններում: Իմամի ստեղծած այս կրթական համակարգում ուսուցանվեցին և դաստիարակվեցին բազմաթիվ երիտասարդներ, որոնք շարունակում են իրենց ուղին դեպի Աստված ու դարձան իսլամական հեղափոխության հիմնական տարրերը: Հասարակական ասպարեզում ևս Իմամի մշակութային բարեկարգման թեորիան ներկայացված է իսլամական հեղափոխության սահմաններում: Նրա կարծիքով հանրության պատշաճ մշակույթը պետք է ունենա հետևյալ երեք առանձնահատկությունները.

1) Ունենա մարդու հոգևոր աճի և դաստիարակման համար անհրաժեշտ համակարգ:

2) Լինի ակտիվ, առաջավոր, որոնողական և երբեք չենթարկվի քարացման, վրդովմունքի և արևմուտքի ազդեցությանը:

3) Սեփական մշակույթային առաձգականությամբ ստեղծի մշակութային անկախություն:

1) Առաջին հարցի վերաբերյալ Իմամ Խոմեյնին համոզված էր, որ մարդու հոգևոր դաստիարակությունը հանդիսանում է աշխարհի մեծ կրոնների և Աստծո մարգարեների քարոզի հիմքն ու էությունը: Ինչպես Հիսուս Քրիստոսը հայտնվեց մարդկանց հոգևոր-դաստիարակման և փրկության համար, այնպես էլ իսլամի մեծն մարգարեն ստանձնեց մարդկանց հոգևոր դաստիարակման և խրատման պարտականությունը: Կրոնական մշակույթի հիման վրա մարդու կրթումն ու խրատումը ձևավորված է դեպի Բարձրյալ տերը: Իմամի կարծիքով մշակույթի ամենաառաջնային և կարևոր դերն ու պարտականությունը բարեպաշտ մարդու դաստիարակումն է: Իրանի առաջադեմ կառավարության ձևավորման և արևմուտքի քննադատման ասպարեզում մշակույթի կարևորության առումով նա նշել է. «Նրանք մեր մշակույթը դարձրել են այնպիսին, որ դրա միջոցով մարդ չի կարող դաստիարակվել: Նրաք չեն թողել, որ մեր երիտասարդները հոգևոր աճ ունենան: Նրանք մեր մշակույթը ճեղքել են և այն գցել այնպիսի իրադրության մեջ, որ մարդը չկարողանա դաստիարակվել նրանով»: Նա Աստծո ճանապարհով մարդու դաստիարակման և կրթման հարցը համարում էր Իրանի 1979 թվ-ի ժամանակավոր կառավարության հիմնական խնդիրն ու պարտականությունը: Այս առումով նա նշել է.

«Հարկավոր է այս նոր տարում առաջնային մեծ հոգածություն ցուցաբերել մշակույթի հանդեպ, քանի որ սա հույժ կարևոր է: Այս մշակույթը պետք է փոփոխվի և գաղութային մշակույթը պետք է դառնա անկախ: Մեր ուսուցիչները պետք է ընտրվեն մեր մշակույթին համապատասխան և մեր երիտասարդներին դաստիարակեն պատշաճ ձևով: Այսինքն՝ մեր երիտասարդները չպետք է դաստիարակվեն մակաբուծական հոգով: Մինչև հիմա եղել է այնպես, որ նրանց կրթել են արևմտյան հոգով: Այս հարցը հանդիսանում է մեր մշակույթի գերխնդիրներից: Մեր մշակույթն ի վերջո պետք է բարենորոգվի»:

Իմամն այս կարևոր փաստի վրա ուշադրության բացակայության առումով, մասնավորապես համալսարաններում, նշում է. «Ավելի քան 50 տարի է մենք համալսարան ունենք, սակայն քանի որ առկա է դավաճանությունը, այս օջախներում մարդկային աճ չենք գրանցել: Մեր ողջ հասարակությունն ու մարդկային պոտենցիալը ոչնչացվել է»:

2) Իմամի տեսանկյունից մշակույթը պետք է լինի առաջադեմ և ո-

բոնողական և դրա զարգացման հարցում հասարակությունը պետք է ստանձնի նշանակալից և ակտիվ դեր: Ըստ նրա առաջադիմությունն ու որոնողականությունը հանդիսանում են մշակույթի հիմնական առանձնահատկություններից: Իսկ արևելյան մշակույթն ունի այդ կարողությունը և կարող է առանց այլ մշակույթների ազդեցության և միջամտության ստանձնել ակտիվ և որոնողական դեր: Նա իր կտակում նշել է արևմտյան գաղութային ծրագրերի շրջանակներում երիտասարդների մշակութային տկարացման և անկման համար անբարոյականության միջոցների գործածման մասին և այն համարել արևելյան մշակույթի, մասնավորապես Իրանի, աճի և առաջադիմության արգելք: Իմամի կարծիքով արևելքի ինքնավստահության փաստը հանդիսանում է արևելյան մշակույթի որոնողականության և անվեհերության ուղիներից մեկը: Հենց այս առումով նա իր հանրահայտ կտակում այսպես է դիմում երիտասարդներին.

« Արիական և արաբական ցեղերին պատկանող երիտասարդները ինչո՞վ են պակաս գերմանական ցեղերից»:

3) Իմամ Խոմեյնու տեսանկյունից յուրաքանչյուր հասարակության սեփական մշակույթը հանդիսանում է այդ իսկ հասարակության աճի և զարգացման ամենանպատակահարմար երևույթը: Մշակութային անկախության համար անհրաժեշտ է այն դարձնել առավել արդյունավետ:

Իմամի ստեղծագործություններում արևմտյան մշակույթը հանդիսանում է արևելյան մշակույթի կործանիչը, սակայն այսուհանդերձ, Իմամն առավել հենվում է արևմտյան մշակույթի դրական դրույթների վրա: Իմամի գաղափարներում մշակութային ինքնավստահությունը հանդիսանում է կարևոր հիմք:

Իմամը համոզված էր, որ արևմուտքը մտադիր է արևելքում իրականացնել մշակութային նվաճում, իսկ այդ նվաճումը կխաթարի հասարակության մշակութային կարգուկանոնը: Գորբաչովին ուղղված իր պատմական ուղերձում նա նշում է.

«Եթե դուք ցանկանում եք, պատսպարվելով արևմտյան կապիտալիստական օջախներում, միայնակ լուծել կոմունիզմի և սոցիալիզմի կույր հանգույցները, ապա ոչ միայն չեք ապաքինի ձեր հասարակության վերքերը, այլ ուրշները պետք է գան՝ ուղղելու ձեր սխալները»:

Իմամի տեղին արևմտամերժությունը, միշտ պայմանավորվել է մշակութային անկախության ձեռքբերմամբ և պահպանմամբ: Ըստ նրա՝ արևմտյան մշակույթի մերժումը, մշակութային բարենորոգման և արևելյան մշակույթի սահմաններում, պետք է հանգեցնի մշակութային անկախության: Այս առումով նա նշել է.

«Ի վերջո մշակույթը պետք է փոխարինվի առավել կատարյալ, անկախ և մարդկային մշակույթով»:

Իմամի տեսանկյունից հասարակության բարեփոխումը պետք է սկսել տվյալ հասարակության մշակույթի բարեփոխումից: Իրանի իսլամական հեղափոխությունը, Իմամի առաջնորդմամբ, հանդիսացել է և հանդիսանում է մարդու մշակութային և հոգևոր կյանքի վերափոխիչը:

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի պրոֆեսոր, պր-ն ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ, «Իմամ Խոմեյնու քաղաքական հայացքները և ԻԻՀ արտաքին քաղաքական ուղեգիծը»

Թեման իմ կարծիքով հրատապ է, և ինձ թվում է՝ այն ենթադրում է անդրադարձ դեպի գրեթե 2 դարի պատմություն ունեցող մի ժամանակաշրջան, երբ տարածաշրջանում խաչվել, բախվել և համագործակցել են տարբեր մշակույթներ, այն բանից հետո, մասնավորապես, երբ վեր բարձրացող Ռուսաստանը շարժվեց դեպի հարավ: Պետք է ասել, որ հայերս այդ ժամանակ ծանր կացության մեջ էինք, և մենք ինչ-որ իմաստով ակտիվորեն նպաստեցինք Ռուսաստանի դեպի հարավ գալուն, սա պատմական փաստ է, որովհետև այդ ժամանակ Հայաստանը գտնվում էր երկու իրար հավասար ուժով, հավասար պետությունների ազդեցության գոտում, այն իմաստով, որ դարձել էր թատերաբեմ, պատերազմների թատերաբեմ, և Հայաստանը հույս ուներ Ռուսաստանի հետ կապել իր գոյատևության, ֆիզիկական գոյատևության խնդիրը: Բայց շուտով պարզվեց,որ Ռուսաստանը տարածաշրջանում, և հատկապես Արևելյան Անդրկովկասում տանում է այլ քաղաքականություն, և այդ քաղաքականության իմաստը, ինչպես բոլորիս հայտնի է, տարածաշրջանի, հատկապես Արևելյան Անդրկովկա-

սի ապահիրանականացումն է այսպես ասենք, ինչպես ռուսական գրա-
կանության մեջ նշվում է: Այլ կերպ ասած՝ որպեսզի տարածաշրջանը
վերջնականապես պոկի Իրանից, Պարսկաստանից, Ռուսաստանը ո-
րոշեց այստեղ տանել հատուկ քաղաքականություն և դրա իմաստը
այն էր, որ պետք է այստեղ իրանական մշակույթի ազդեցությունից
հենց հեռացնել տարածաշրջանը: Ի հիասթափություն նաև հայերիս,
պարզվեց, որ այն էթնիկական տարրը, որի վրա կարող էր հենվել Ռու-
սաստանը դա թուրքական տարրն էր, տեղի թաթարներն էին և Ռու-
սաստանը, ինչպես գիտեք, նախանցյալ դարում՝ 19-րդ դարում վարեց
հատուկ քաղաքականություն՝ ոգևորելով, սատարելով թուրքական
տարրին, հատկապես Արևելյան Անդրկովկասում: Պահանջվեցին, որ-
պեսզի բացվեն ռուս-թաթարական դպրոցներ, 10-ամյակներ պահանջ-
վեցին, դա շատ դժվար գործ էր,բայց հետևողականորեն քաղաքակա-
նությունը տարվում էր և միայն 70-ական թթ., օրինակ, առաջին թուր-
քալեզու օրգանը Զաղուդիի խմբագրությամբ այդտեղ բացվեց, բայց
դա էլ այդպես շուտափույթ արդյունքներ չէր տալիս, միայն դարի վեր-
ջին նույնիսկ Արևելյան Անդրկովկասի թուրքախոս մտավորականու-
թյունը դեռևս թյուրքիզմին չէր հարում, դա կատարվեց 19-րդ դարի վեր-
ջին կտրուկ ձևով և դա ցույց է տալիս , թե հետևողականորեն վարվող
քաղաքականությունը ինչ արդյունքներ կարող է տալ, 10-ամյակներ
շարունակ վարվող քաղաքականությունը ինչ արդյունքներ կարող է
տալ: Ես պետք է ասեմ, որ թուրքական գիտակցության, թյուրքիզմի ա-
ռաջխաղացումը Արևելյան Անդրկովկասում այդպես հովանավորվում
էր, և այդ խնդիրը նոր, բոլորովին որակապես նոր խնդիրներ դրեց ինչ-
պես հայերի առաջ, այնպես էլ Անդրկովկասի, Հարավային Կովկասի
բոլոր ժողովուրդների առաջ: Ի դեպ ես պետք է ասեմ, որ, ես ուղղակի
մոռացա նշեմ, որ երբ մենք՝հայերս ինչ-որ հույսեր ենք կապում ռուսա-
կան գործոնի հետ, դա նաև այնպես պատահական չէր, որովհետև ռու-
սական արքունիքը մեզ խոստանում էր Ղարաբաղյան մելիքությունն-
երի հիմքի վրա վերականգնել հայոց պետականությունը: Բայց ահա
այսպիսի խառը իրադրության մեջ, երբ հովանավորված թուրքալեզու
ազգաբնակչությունը ռուսական կայսրության կողմից ներառված էր
թուրքացման գործընթացի մեջ, ահա այդպիսի իրադրության մեջ տա-
րածաշրջանը հայտնվեց հեղափոխական, սոցիալիստական հեղափո-

խության հորձանուտում, և հետո պարզվեց, որ Խորհրդային Ռուսաս-
տանը, ըստ էության, շարունակում է նույն գիծը, ինչ գիծ վարել էր Ցա-
րական Ռուսաստանը: Խորհրդային տարիներին նույնպես այդ գիծ
տարվում էր այլ կոնտեքստում, և պետք է այստեղ ասել, որ Թուրքիան
բավականաչափ ակտիվ էր գործում, ես չգիտեմ ինչպես դա որակել, ո-
րակել որ մեր հայ դիվանագիտությունը, օրինակ, չգտնվեց իր բարձ-
րության վրա, հակազդելու թուրքական դիվանագիտությանը, թե ասեմ
որ այդ թվում նաև մեր եղբայրական ժողովրդի՝ պարսկական դիվանա-
գիտությունը չկարողացավ նույնպես դիմակայել դրան, բայց փաստ է
որ անցյալ դարի՝ 20-րդ դարի սկզբներին թուրքերին հաջողվեց դար-
ձյալ Մոսկվայում ձևավորել թուրքանպաստ քաղաքականություն, այն
բանով, որ ահա պետք է Թուրքիան դառնա սոցիալիստական հեղա-
փոխության տարածման առաջնադիրքը Իսլամական Արևելքում:
Պարզվեց, իհարկե, որ դա այդպես չէ, որովհետև իմ համոզմամբ, ես
միայն ինքս չեմ այդ կարծիքին, ի վերջո թյուրքիզմի գաղափարի գե-
րակայությունից հետո ինձ թվում է, գուցե դա միայն իմ մասնավոր
կարծիքը այստեղ ներկայացնեմ, ինձ թվում է,որ ազգայնական գաղա-
փարախոսության արժեքները հոգևոր արժեքներից այդ երկրում շատ
բարձր են դասվում, և Ռուսաստանը նույնպես շարունակեց թուրքաց-
ման այդ գիծը խորհրդային տարիներին, բավական է ասել, որ ռուսա-
կան կայսրության գիծը շարունակելով, որը չէր տեսնում Իսլամը դա-
վանող փոքր ժողովուրդներին՝ թալիշներին, թաթերին, լեզգիներին, չէր
տեսնում Ցարական Ռուսաստանը, Խորհրդային Ռուսաստանը նույն-
պես չտեսավ դրանց և ուծացման քաղաքականությունը առաջ էր տա-
նում ամբողջ թափով: Եթե մենք նայենք վիճակագրական տվյալները
դեմոգրաֆիական տվյալներին վերաբերող, փաստերին վերաբերող, ա-
պա մենք կտեսնենք, թե ինչպես էր այսպես կոչված ադրբեջանակա-
նացումը առաջ շարժվում: Բայց պետք է այստեղ ասել, որ այսպես
կոչված Ադրբեջանը՝ Խորհրդային Ադրբեջանը դա նույնպես կայսե-
րական նկրտումներով առաջադրված երկրի անուն էր, նոր անուն
Պարսկաստանի հյուսիս-արևմտյան երկրամասի անունը, որը սեփա-
կանվեց այս դեպքում մի կողմից մուսաֆաթների կողմից, իսկ հետո
այդ գիծը շարունակեցին նաև խորհրդային տարիներին, դա վտանգա-
վոր մի ռեալիկ էր Իրանի հասցեին, որովհետև, ինչպես գիտենք, խոր-

հրդային տարիներին նույնպես դեպի Հարավային Ադրբեջան շարժվելու ծրագրերը օրակարգից չհանվեցին և ավելին, 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին թվում էր, թե պետք է իրականություն դառնար: Հիմա հետխորհրդային իրողությունները դարձյալ չեն հանել օրակարգից, ես իմ այս ելույթը այսպես կանվանեի, Ռուսաստան-Իրան-Հայաստան երկխոսություն Արևելյան Անդրկովկասի շուրջ: Իրադրությունը հետևյալն է, այնտեղ խորհրդային տարիներին մի տեսակ ազգային ընդհատակ է նետված իրապես հավատացյալ ժողովուրդներ, օրինակ թաթերը, թալիշները, լեզգիները, գտնվում էին մի տեսակ ազգային ընդհատակում և ոչ հայաստանյան իշխանությունները, ոչ Ռուսաստանի նոր իշխանությունները, որևէ քայլի չէին դիմում այդ ժողովրդների իրավունքները պաշտպանելու հարցում: Խնդիրը հետևյալն է. Ռուսաստանը կարող է այդ խնդիրներին մոտենալ միջազգային իրավունքի տերմիններով, լեզվով, կատեգորիաներով, և ես կարծում եմ, որ Արևմուտքի հետ խոսակցության լեզուն հենց դա պետք է լինի, այդ տեսակետից մենք էլ ունենք որոշակի հնարավորություններ, բայց ես ուզում եմ նշել, որ տարածաշրջանային երկրներից ոչ մեկը ո՛չ Ռուսաստանը կամ իմ պատկերացմամբ ոչ մեկը ուղղակի համարժեք քայլեր չեն ձեռնարկում ազգային ընդհատակում հայտնված ժողովուրդների շահերի պաշտպանության համար Արևելյան Անդրկովկասում: Սա, ես կարծում եմ, արտաքին արևելյան խնդիրներից մեկն է, որը և՛ մարդու իրավունքների սկզբունքների տեսանկյունից, և՛ միջազգային նորմերի տեսակետից, և՛ ազգերի ինքնորոշման տեսակետից կլինի ճիշտ քայլ և կդառնա այն հիմքը, որով արտաքին քաղաքական ներդաշնակցություն և համագործակցություն կարող է առաջանալ տարածաշրջանի երկրների միջև, բայց այսօր էլ Մոսկվայում կան մտավորականներ, քաղաքական կարծիք ձևավորող մտավորականներ, վերջերս Ռուսաստանում լույս է տեսել մի ամփոփ ուսումնասիրություն «Ադրբեջանը և Ռուսաստանը հասարակություններ և պետություններ», որտեղ դարձյալ արդեն նոր, եթե դարասկզբին մի ուրիշ տեսակետից են ասում, թե սոցիալիստական հեղափոխությունը դեպի արևելք տարածելու համար է պետք Թուրքական Ադրբեջանը, ապա այսօր էլ մեկ այլ բան են ասում,գրքի առաջաբանում գրվում է, որ Ռուսաստանին պետք է Անդրկովկասում Թուրքական Ադրբեջան, այ-

սինքն՝ դարձյալ Ռուսաստանը շարունակում է անտեսել Ադրբեջանում ազգային ընդհատակում հայտնված բազմաթիվ ժողովուրդների շահերը:

Մարդասիրության՝ հումանիզմի, ժողովուրդների հավասարության սկզբունքները, մշակութային ինքնության սկզբունքները, որը Իմամ Խոմեյնին որդեգրել էր, որը Իմամ Խոմեյնին դավանում էր, և որը այսօր դավանում է պարսիկ ժողովուրդը, բարձր մշակութային այն արժեքները, որոնք պաշտպանում է Պարսկաստանը սեփական ազգային ինքնության և մշակութային ինքնության այդ գաղափարախոսությունը, կարող է հիմք դառնալ արտաքին քաղաքական արգասաբեր երկխոսության համար տարածաշրջանում: Սրանք նկատառումներ էին միայն մեծ թեմայի, որի համար պետք են ավելի լուրջ հետազոտություններ:

Աժ պատգամավոր, տկն ՀԵՐՄԻՆԵ ԱՂԴԱԼՅԱՆ. «կանանց դերը Իրանում»

Իրանի Իսլամական հեղափոխությունը դարակազմիկ երևույթ է ոչ միայն այդ երկրի ժողովրդի կյանքում, այլև ամբողջ մարդկության պատմության մեջ: Դրանով աշխարհն ունեցավ զարգացման նոր, ուրույն մոդել: Իմամ Խոմեյնու շնորհիվ իսլամը հավատից վեր է ածվել հասարակության զարգացման գործոնի:

Արմատական փոփոխություններ տեղի ունեցան բնակչության բարեկեցության մեջ, նրա բարոյահոգեբանական մթնոլորտում, ընդլայնվեցին մշակութային զարգացման ուղիները, բարեփոխվեց ամբողջ կրթաղաստիարակչական համակարգը:

Այս բարեփոխումների կենտրոնում, ըստ Իմամի գաղափարների,մարդն է: Մարդու արժանապատվությունը Խոմեյնին տեսնում է վերջինիս ազատության մեջ: Իմամը մարդուն տալիս է այնպիսի ազատություն, որ նա դառնա «...երկրում Աստծո տեղապահը»:

Մարդուն այդպիսի բարձունքի հասցնելով, Իմամ Խոմեյնին արտահայտում է նաև կնոջ կերպարի և նրա ազնվազարմ ինքնության մասին իր տեսակետները, որոնք քաղված են Իսլամի անաղարտ գա-

դափարներից և նպաստում են հասարակության գործերին կնոջ մասնակցության ապահովմանը: Այդ առիթով նա ասել է. «Իսլամի պատմությունն ինքնին վկայում է, թե Աստծո մարգարեն ինչպիսի անսահման հարգանք էր տածում այս արժանապատիվ էակի նկատմամբ, որը հասարակության մեջ իր դիրքերը համարյա չի զիջում տղամարդու դիրքերին»:

Մուսուլմանական աշխարհում կինը միշտ էլ որոշակի տեղ է գրավել ինչպես դավանական հիմնական դրույթներում, այնպես էլ առօրյա կյանքում ու կենցաղում: Բավական է նշել, որ մահմեդականության ակունքների մոտ կանգնած կանայք որոշակի ներդրում են ունեցել կրոնական ուսմունքի ձևավորման գործընթացում: Հայտնի է Մուհամմադ մարգարեի առաջին կնոջ՝ Խադիջայի դերը մուսուլմանական վարդապետության ձևավորման գործընթացում: Ցայտուն է նաև մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի օրինակը՝ նա առաջնակարգ դիրք է գրավում կրոնա-դավանական և ծիսական համակարգերում:

Թեև տարածված է այն կարծիքը, թե կինն իսլամական երկրներում երկրորդական դեր է խաղում և լիովին ենթարկվում է տղամարդու կամքին, բայց իրականում նա ավելի ակտիվ է ու բնավ չի զիջում կրոնական այլ ուսմունքների հետևորդներին և իր գործառույթով անգամ կարող է գերազանցել նրանց: Մահմեդական գաղափարախոսներն ազգային ինքնակայունությունն ու յուրօրինակությունը տեսնում են ոչ միայն ամուսնաընտանեական հարաբերությունների, այլև կնոջ ավանդական դիրքի պահպանման և ամրապնդման մեջ: Ազգային ինքնագիտակցությունը, նախնիների, ինչպես նաև ավանդույթների հանդեպ հարգալից վերաբերմունքը, հայրենիքի նկատմամբ սերը ձևավորվում են ընտանիքում: Այդ ամենը զավակների մեջ պատվաստելու, նրանց դաստիարակելու գործում կինն առաջնակարգ դեր է խաղում: Հասկանալի է, թե ինչու հիշյալ խնդիրը մեր օրերում նոր իմաստ է ստանում և կրում է ոչ միայն բարոյավարքագծային, այլ նաև հասարակական բնույթ:

Իրանում կնոջ բարձր դերը միշտ է եղել : 12-րդ դարից մեզ է հասել Մահսաթի խանումի անունը: Այդ բանաստեղծուհին պարզապես կնոջ ազատության կերպար էր:

Իրանի Իսլամական Հեղափոխությունից հետո աննախադեպ հնարավորություն ստեղծվեց մշակութային, հասարակական և քաղաքական կյանքին կանանց ակտիվ մասնակցության համար:

Որոնք են այդ ուղղությունները և նրանց մասնակցության ձևերը:

Առաջինը կրթական համակարգն է: Նախկինում կնոջ կրթության նկատմամբ հասարակության վերաբերմունքը մերժողական էր: Այժմ դա փոխվել է: Աղջիկները կարող են ստանալ ինչպես միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթություն:

Դժվար է գերագնահատել կրթության դերը մարդ էակի, հատկապես կնոջ կյանքում: Դա ոչ միայն արժանապատվության և անկախության հիմք է հանդիսանում, այլև հնարավորություն է տալիս ստեղծագործ աշխատանքի, կնոջ բոլոր բնատուր ուժերի և հնարավորությունների կենսագործման համար: Սա ճանապարհ է բացում, որ կինը հասարակության լիիրավ անդամ դառնա: Վերցնենք մշակութային ոլորտը: Իրանի կանայք վերջին տարիներին խոշոր հաջողություններ են արձանագրել գրականության ասպարեզում՝ որոշ կանայք նույնիսկ հասցրել են ճանաչվել որպես տարվա լավագույն գրքերի հեղինակներ: Այստեղ կանայք ղեկավարում են 40 առաջնակարգ տպագրական կենտրոնները, ավելի քան 100 մշակութային հաստատություններ և լրատվական ծառայություններ: Կանայք կազմում են հանրային գրադարանների աշխատողների և հաճախորդների կեսից ավելին:

Իսլամական հեղափոխությունից հետո կինոյի ոլորտում ընդգրկվել են 1500 կին արվեստագետներ: Վերջին տարիներին նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել միջազգային կինոփառատոներին, ստացել են 66 տարբեր մրցանակներ: Իրանցի կանայք ակտիվ են նաև ստեղծագործական ոլորտում, արվեստի բոլոր բնագավառներում, ազգային և դասական երաժշտության մեջ: Ակնառու հաջողությունների են հասել կանանցից բաղկացած երաժշտական համույթները և ինքնուրույն կատարողները: Կանայք հետ չեն մնում նաև բեմական արվեստի, թատրոնի, նկարչության ասպարեզներում: Կազմակերպելով ցուցահանդեսներ, թատերական փառատոների, նրանցից շատեր արժանանում պատվավոր մրցանակների:

Իրանի կանանց համար համեմատաբար նոր ասպարեզ է տուրիզմը: Նրանք ակտիվորեն ընդգրկվել են տուրիզմի բարձրագույն ուսումնական հաստատություններում, դարձել տուրիստական ծառայու-

թյուններ իրականացնող գրասենյակների տնօրեններ, էքսկուրսավարներ, պատասխանատուներ:

Պետք է առանձնահատուկ նշել կանանց դերը գիտական, գիտահետազոտական ասպարեզում: 145 կին ծավալում է գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքներ, զբաղվում է մշակութային ժառանգության պահպանմամբ:

Այս բոլոր նվաճումները նախկին վարչակազմի օրոք հնարավոր չէին լինի, այն էլ այսքան ծավալուն և բազմաբնույթ:

Հետևաբար, Իրանում կնոջ դերի բարձրացումը Իսլամական հեղափոխության կարևորագույն նվաճումն է: Եվ սա մեկ անգամ ևս խոսում է այն մասին, որ Իմամ Խոմեյնու գաղափարները համամարդկային են, դրանք տանում են դեպի զարգացում և առաջընթաց, իսկ Իսլամական հեղափոխությունը լուսավոր ուղի է բացել մարդկանց համար:

Սիոնիզմի երևույթը ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ գաղափարներում

Ըստ Իմամ Խոմեյնու քաղաքական տեսակետի, եթե իսլամական իշխանության ստեղծումը Իրանում առաջնային էր , ապա երկրից դուրս Երուսաղեմի և Պաղեստինի ազատագրումը հանդիսանում էին նրա մտքի ամենակարևոր քաղաքական մտահոգությունը:

Փեհլևիական ռեժիմի հետ ունեցած Իմամ Խոմեյնու ամենակարևոր տարաձայնությունը կապված էր սիոնիզմի Իրան ներթափանցման և փեհլևիական իշխանության մեջ իսրայելական տարրերի առկայության հետ:

Այլ կերպ ասած՝ կարելի է Իմամի հեղափոխական և ազատագրական գաղափարներում Իրանի և Պաղեստինի ժողովուրդների ազատագրումը համարել միանման անհրաժեշտություն, որոնք էլ քաղաքական պայքարի հիմք են հանդիսացել նրա գրավոր և բանավոր ստեղծագործություններում:

Իմամի առաջին պաշտոնական դիրքորոշումը համընկավ փեհլևիական ռեժիմի դեմ նրա քաղաքական պայքարի սկզբի հետ, երբ նա պայքարում էր Իսրայելի նավթային Էմբարգոյի և Իսրայելի

հետ դիվանագիտական հարաբերությունների դադարեցման առումով ռեժիմի ցուցաբերված անհամաձայնության դեմ:

Իմամը իր հարցազրույցներից մեկում նշել էր.

«... Իսրայելին օգնելը այն հիմնական գործոններից մեկն է, որը մեզ է դրդում հանդես գալ ընդդեմ շահի: Նա հափշտակել է մուսուլմանների նավթն ու տվել Իսրայելին: Սա ինքնին հանդիսանում է իմ ու շահի տարաձայնության հիմնական գործոններից մեկը»:

Դեռևս 1962 թվ-ից և Իմամը իր հանրահայտ ուղերձում՝ 1963 թվ-ին կառավարության կողմից մուսուլմանների և հոգևորականության կոտորածի կապակցությամբ նշված է, որ դրա հիմնական դրդապատճառը Իսրայելի շահերի պաշտպանումն էր:

Դրանից հետո և երկրից դուրս, և երկրի ներսում, տարբեր առիթներով նա բարձրացրել է այս հարցը: Հենց այն ժամանակ, ի պատասխան Ղոմ արհեստավորների նամակի, Իսրայելի կառավարության հետ տնտեսական հարաբերությունների հաստատման առումով, նշված որոշումը համարել է իսլամի և երկրի անկախության համար մեծ վտանգ: 1963 թվ-ին, ի պատասխան Յազդի հոգևորականների նամակի, նրա ամենախիստ և ամենալուրջ քաղաքական դիրքորոշումը բանտից ազատվելուց հետո Կենտրոնական մզկիթում ունեցած նրա հանդիսավոր ելույթն էր:

«... Ով ժողովուրդ, մեր կրոնը պարտադրում է, որպեսզի մենք չհանդուրժենք իսլամի թշնամիներին, մեր Ղուրանը պարտադրում է, որպեսզի մուսուլմանների շարքում չդաշնակցենք իսլամի թշնամիների հետ: Մեր ժողովուրդը դեմ է Իսրայելի հետ շահի դաշնակից լինելուն»:

Ֆեյզիե հոգևոր դպրոցի արյունահեղ կոտորածներից հետո, Իմամն իր պատմական ելույթում Իսրայելի դեմ պայքարը իր պայքարի հիմնական առանցքն է համարում:

Իմամը, 1964 թվ-ի մոհառամ ամսվա իր ուղերձում, Իսրայելի հետ հարաբերությունները համարեց մեծ նենգություն և մուսուլմաններից պահանջեց համախմբվել Իսրայելին դիմակայելու համար:

Իմամը, 1968 թվ-ի սեպտեմբերին, ի պատասխան Պաղեստինի մի խումբ երիտասարդ ազատամարտիկների նամակի, Իսրայելի դեմ պայքարի կարևորության և անհրաժեշտության հայտարարման հետ մեկտեղ, նա թույլատրեց, որպեսզի մզկիթներին կատարված նվիրատ-

վությունից ստացված գումարը նույնպես հատկացվի Իսրայելի դեմ պայքարի գործընթացին:

1969 թվ-ի օգոստոսի 18-ին, սիոնիստները կրակի մատնեցին Մասջեդ-օլ-աղսա մզկիթը: Իմամը, սիոնիստներին դատապարտելու հետ մեկտեղ, մզկիթի վերակառուցման առումով կոչ արեց մուսուլմաններին՝ մինչև Պաղեստինի ազատագրումը չվերակառուցել այն, որպեսզի սիոնիստների ոճրագործությունը լինի մուսուլմանների աչքի առաջ:

1961-1970 թթ-ի ընթացքում և նախքան իսլամական հեղափոխության վերափոխումները, Իմամը ի պատասխան մարդկանց, հոգևորականների և ուսանողների նամակների և իր բազմաթիվ հայտարարություններում կարևորել է Պաղեստինի ազատագրման համար մղվող սրբազան պատերազմն ու պաշտպանական ջոկատների աջակցությունը՝ մուսուլմանների հասարակական գաղափարներում հավերժ կենդանի պահելով նշվածը:

Իմամի հակասիոնիստական ձգտումն ու նրա աջակցությունը Պաղեստինի մարդկանց հանդիսացան Ղոդսի օրվա (սուրբ օր) ստեղծման դրդապատճառը, որպես կեղեքիչների և սիոնիստների դեմ պայքարի համաշխարհային օր: Իմամը ինքնաբուխ և խորհրդանշական կերպով սուրբ Ռամազան ամսվա վերջին ուրբաթ օրը անվանեց սուրբ օր և այս կապակցությամբ նրա ուղերձներում նշված է. «... Ղոդսի օրը մի համաշխարհային օր է, կեղեքիչների դեմ կեղեքվածների պայքարի օր: Թող բոլոր ազգերը պայքարեն և մաքրելով հասարակությունը աղբը լցնեն աղբամանների մեջ: Մենք պետք է աշխատենք փրկել սրբությունը: Ղոդսի օրը բարու և չարի տարանջատման օրն է»:

Իսրայելի կողոպտիչ պետության ներքո սիոնիզմի հայտնվելը և տարածաշրջանի մարդկանց ամեն տեսակի սպառնալիքների ենթարկումը Միջին Ասիայում հանգեցրեց անթիվ փոփոխությունների: Այս երևույթը և նրա հետևանքով առաջացած պատահարները, միջազգային հարաբերությունների գրականության մեջ անվանվեցին «արաբա-իսրայելյան կոնֆլիկտ»: Իմամի գաղափարներում, սիոնիզմը հակահիսլամական և հակամարդկային մի շարժում է: Նա սիոնիզմի հակահիսլամական հակվածությունը համարում էր այս շարժման ամենակարևոր առանձնահատկությունը, որը հովանավորվում էր գաղութային տերությունների կողմից: Ըստ նրա, սիոնիզմը մի քաղաքական,

գաղութային, հակակրոնական երևույթ էր՝ հրեա համայնքից անկախ: Իմամ Խոմեյնին սիոնիզմի և Իսրայելի հանդեպ իր անհամաձայնությունը տարանջատում էր հրեաներից և նրանց կրոնից:

Իմամը սիոնիզմի ծագման աղբյուր էր համարում գաղութատիրությունն ու կեղեքումը, որոնք գտնվում են Ամերիկայի անմիջական աջակցության հովանու ներքո: Նա սիոնիստներին համարում էր Արևմուտքի ամենամեծ կապիտալիստների և հատկապես Ամերիկայի դաշնակիցը, իսկ Իսրայելի առաջացումը նկարագրում է հետևյալ կերպ. «... Իսրայելը ծնվեց Արևելքի և Արևմուտքի գաղութային տերությունների համաձայնությամբ և մտահղացմամբ՝ մուսուլման ազգերի կործանման և ոչնչացման համար: Այսօր այդ շարժմանն աջակցում և օգնում են բոլոր գաղութատիրական վարչակարգերը: Արևմտյան երկրները, Իսրայելին քաղաքական և ռազմական աջակցություն ցուցաբերելով և չարիք ծնող զենքերի մատակարարմամբ, արաբների և մուսուլմանների դեմ նորանոր չարիքներ և ագրեսիաներ են ծնում»: Սիոնիզմի մյուս հատկություններից է նաև «Նեղոսից մինչև Եփրատ» գաղափարը, որի մասին Իմամ Խոմեյնին իր ելույթներում և ստեղծագործություններում բազմիցս նշել է: Նա համոզված էր, որ Պաղեստինի, Լիբանանի, ... գրավմամբ և հաշտության պայմանագրերի կնքմամբ, սիոնիստների ոտնձգությունները չեն դադարի, այլ կսկսեն նոր քայլեր ձեռնարկել հզոր Իսրայելի ստեղծման նպատակով, իսկ դա մեծ չարիք կդառնա Միջին Ասիայի և տարածաշրջանի բոլոր պետությունների համար:

Հենց այս առումով, Իմամ Խոմեյնին Ամերիկայի և Իսրայելի քաղաքական խաղերը, խաղաղարար ձևակերպմամբ, համարել է «Նեղոսից մինչև Եփրատ» գաղափարի հետագա քայլերի կատարման համար շահարկվող ժամանակահատված: Իսրայելի այս գործողությունները նա անվանել է տարածաշրջանի համար լուրջ վտանգավոր գործողություններ:

Ընդհանուր առմամբ, Իմամ Խոմեյնու կարծիքով, սիոնիզմը, որն իրենից ներկայացնում է հակահիսլամիզմ, հակակրոնիզմ, զավթողականություն, հանդիսանում է գոռոզության ծնունդ, անբարոյականության հարուցիչ և քաղաքական միջոց է բոլոր իսլամական պետությունների պաշարներին տիրելու համար, որոնք սփռված են Նեղոսից մինչև Եփրատ:

ՀՀ ԳՄ նախագահ ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ. «Իմամ Խոմեյնու ազդեցությունը Իրանի հետհեղափոխական գրականության վրա»

Իրանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն կենտրոններից է և իր անուրանալի նպաստն է բերել մարդկության զարգացման բազմադարյան պատմությանը:

Անվիճելի իրողություն է, որ յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ առաջին հերթին ճանաչվում ու գնահատվում է այն խորհրդանիշ-կերպարներով, ովքեր մեր հավաքական գիտակցության մեջ ուղենշային, դարակազմիկ դեր ու նշանակություն են կրում, ովքեր ռահվիրայի առաքելությամբ ճանապարհ են հարթել մշակույթի այս կամ այն ոլորտում: Այսպես, Իրանի գրական-մշակութային հարուստ ավանդույթների մասին խոսելիս, մեր մտապատկերում արթնանում են Ռուդաքիի, Ֆիրդուսու, Խայամի, Խաքանիի, Սաադիի, Հաֆեզի և այլոց անունները, ովքեր սիրո, իմաստության և հումանիզմի քարոզիչներ են և որոնց հանճարը իրավամբ նույնքան Իրանի ազգային սեփականությունն է, որքան միջազգային հանրությանը: Այս տեսակետից 20-րդ դարը ևս բացառություն չեղավ. պարսկական արձակն ու գրականությունը հավասար պոռթկումով աշխարհին տվեցին հրաշալի գրողների մի փաղանգ, որն իր ստեղծագործության մեջ անզուգական կերպով ներհյուսում է ավանդույթն ու արդիականությունը և ի զորու է առանց դույզնինչ զիջումների մրցակցել եվրոպական նորագույն շրջանի ուշագրավ քերթվածների հետ:

Ընդ որում, շահի վարչակարգի հակասական շրջանում անգամ այդ գրականությունը չթառամեց, իր կենսական հյութերը քաղելով իրանական աշխարհացիր Սփյուռքում, և արտերկրում ծնվեցին մնայուն գրական արժեքներ: Բարեբախտաբար, վերջին տարիներին հայ ընթերցողը գեղեցիկ առիթներ ունեցավ թարգմանաբար, առանձին հատորներով հաղորդակցվելու ինչպես պարսկական պոետական նվաճումներին, այնպես էլ արձակի (կուզենայի շեշտել «մետաքսի ճամփան» հատընտիրը, որն ընդգրկում է ավելի քան 30 արձակագիրների):

Բնականաբար, իսլամական հեղափոխությունը, որն իր բնույթով ձեռքբերում է, չէր կարող ներ հորիզոններ չբացել գրականության զարգացման առաջ: Հայտնի է, որ այդ հեղափոխությունը երկու կարևոր թիրախ ուներ՝ կրոնական և մշակութային: Ահա այս զուգակշիռ ոգեղեն հենքի վրա էլ սկզբնավորվել և մեր աչքի առաջ ձևավորվում է գեղարվեստորեն ծանրակշիռ որակ՝ Իրանի ժողովրդի հոգևոր ազատության նոր շրջափուլը: Ամեն մի գրականություն (մշակույթն ընդհանրապես) իր ժամանակի անխարդախ հայելին է, և պարսիկ հետհեղափոխական գրականությունը խտացնում ու ցոլացնում է այն իդեալներն ու միտումները, որոնք բնորոշ են ժամանակակից Իրանին:

Իմամ Խոմեյնին, իր երկրի մեծ բարեկորոգիչը լինելով, նաև ինքնատիպ բանաստեղծ է: Նրա պոետական ընտրանին արդեն թարգմանվել է հայերեն, ուրեմն մենք ևս կարող ենք հավատալ, որ նրա պոետական ժառանգությունը թե ոճի ու պատկերային համակարգի թարմացման առումով և թե բովանդակային շերտերի հարստացման տեսանկյունից չէր կարող հետքը չթողնել արդի պարսից գրական պրոցեսի վրա: Ազատության և ազգային արժանապատվության գաղափարները նոր խթան են նոր աշխարհայացքի ձևավորման, նոր ոճերի հաստատման գործում: Ավելին՝ պարսից գրականությունը դեմքով շրջվել է դեպի մարդը, այն երկու ոտքով կանգնած է ազգային ինքնության արմատների վրա և երկու ձեռքով մխրճված է ազգային արժեքների սաղարթի մեջ:

Ես կուզենայի առանձնահատուկ ընդգծել այս հանգամանքը հիմա, հատկապես այսօր, երբ գլոբալացման անսանձելի հեղեղը, դուռ ու պատուհան, սահմանաձող ջարդելով, ողջ ավերիչ հորձանքով փորձում է խորտակել բազմամշակույթ աշխարհը, ի չիք դարձնել փոքր ու մեծ ազգերի ինքնության «անձնագրերը»՝ նրանց յուրահատուկ մշակույթը, երբ արևմտյան հաճախ կասկածելի արժեքները բառացիորեն գաղութացնում են մեր հոգու անկախությունը, ազգային մշակույթի հանդեպ նման զգոն, խնամքոտ վերաբերմունքը չափազանց ուսանելի է նաև մեզ՝ հայերիս համար:

Իսկապես, ինչպես փաստում է Իրանում տարվող մշակութային քաղաքականությունը, միայն այն երկիրը կարող է առաջընթաց գրանցել մյուս ոլորտներում ևս, որը մշակույթը գիտակցում է որպես ռազմավարական հայեցակարգ, ավելին՝ որպես ազգային անվտանգության կարևորագույն ոլորտ: Իսկ հետհեղափոխական Իրանում պետական ու ազգային այս բախտորոշ խնդիրը ո՛չ միայն գիտակցվում է ու ծրագրվում, այլև հետևողականորեն իրականացվում է:

Միշտ չէ, որ վիճակագրությունը անկողմնակալ խորհրդատու է, բայց քանի որ համեմատության կշեռքի միջով է չափվում արվածն ու չարվածը, կուզենայի մի համառոտ դիտարկում անել: Այսօր, երբ Հայաստանում, որն ավանդաբար գրասիրության ռեկորդներ է սահմանել, ընթերցանության խոր ճգնաժամ է (ինչը ենթադրում է կիսագրագետ սերունդ), մեր դրկից երկրում գրքի ու գրահրատարակության բուռն վերելք է արձանագրվում: Այսօր, երբ մեզանում տարեցտարի փակվում են գրադարաններն ու գրախանութները, Իրանում տարեկան տպագրվում է ավելի քան 25 հազար անուն գիրք: Էլ չասած՝ գրքի միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների մասին, որոնք անփոխարինելի պատուհաններ են բացում դեպի մեծ աշխարհ, դեպի գիտելիքի և գեղեցիկի լույսը: Էլ չասած՝ թատրոնի, կինոյի, ճարտարապետության, արվեստի մյուս ճյուղերում առկա վերելքը, որի հետ ոչ մի համեմատության չի դիմանում Հայաստանում հետզհետե անշեքացող , մուրացիկի կարգավիճակում հայտնված հոգևոր դաշտը...

Իրոք, Իմամ Խոմեյնին նոր շնչառություն, թարմ հոսանք հաղորդեց Իրանի հոգևոր կյանքին, ներշնչեց ազգային ոգի, ազգային իդեալ, որտեղ մշակույթը լիարժեք բաժանարար դեր ունի հավատքի հետ: Միայն հոգևորին փարած, հոգևորի գերկայությամբ ապրող ժողովուրդը կարող է վաստակել անվախճան երթի ուղեգիր՝ անկանխատեսելի աշխարհաքաղաքական ցնցումներով հարուստ մեր դժվար ժամանակներում:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՉՄՈՅԱՆ.

«Իմամ Խոմեյնու պոեզիան պարսից գրականության ավանդույթների համատեքստում»

Իմամ Խոմեյնիի անհատականության ճանաչմանն ուղղված հետաքրքրությունն ու պրպտումները մեզ կանգնեցրին հետաքրքիր խնդրի առջև. տրադիցիոնալի՞ստ էր Իմամ Խոմեյնին թե ռեֆորմատոր:Ինչպես վայել է հզոր անհատականություններին, որոնք ուղղորդում են սեփական ժողովրդի քաղաքակրթության ընթացքը, Խոմեյնին բազմաբնույթ էր: Նա ռեֆորմատոր էր իր քաղաքական գործունեության մեջ և ավանդապահ գրական ժառանգության ոլորտում: Իր ուղերձներից մեկում Իմամ Խոմեյնին համեստորեն գրում է, թե ո՛չ երիտասարդության ժամանակ, ո՛չ էլ ծերության շրջանում բանաստեղծություն գրելու շնորհք չեմ ունեցել: Սակայն նրա բանաստեղծությունների ժողովածուն այսօր պարսից պոեզիայի փաստերից մեկն է, որ հրատարակվել է 20-ից ավելի անգամներ «Դիվանե էմամ» խորագրով: Դիվանի ժանրային կառուցվածքն արդեն բավական է Խոմեյնիին պարսից գրականության լավագույն ավանդների շարունակողը դիտելու համար: Նա ունի ներբողներ, գազելներ, բանաստեղծական բեկորներ, որ կոչվում է ղաթե քառյակներ /ռոբայի/ և մի քանի միջնադարյան պոեզիայում շատ տարածում գտած բանաստեղծական ձևեր մոսամաթ, թարջիբաթ և այլն: Արաբական նվաճումներից երկու դար հետո նոր էթնոմշակութային աշխարհում ձևավորվող պարսից պոեզիան կայանում և զարգանում էր արքունիքում: Այդ է պատճառը, որ ներբողը, լինելով, այսպես ասած,ծրագրային-ժանրային ձև և՛ քանակով, և՛ կարգավիճակով առաջին տեղն էր զբաղեցնում արքունական խրախճանքների և բանաստեղծական մրցույթների ժամանակ: Հենց այդ տրամաբանությունն էլ որոշում է ժանրային ձևերի հիերարխիան, որով կառուցվում էին միջնադարյան պոետների դիվանները: Սակայն Իմամ Խոմեյնիի բանաստեղծությունը ստիպում է խախտել այդ կանոնակարգը՝ թելադրելով դիվանի այլ կառուցվածք: Այն սկսվում է նրա

պոեզիայում անհամեմատ գերակշռող գազելներով և ռոբայիներով:

20-րդ դարի բարձունքից պարսիկ գրականության զարգացման ողջ ընթացքը քննող և դասակարգող իրանցի գրականագետները Մալեք օլ շոարա Բահարը, օրինակ, պայմանականորեն 5 հաջորդական ոճ են փաստել պարսից գրականության զարգացման մեջ՝ խորասանյան, իրաքյան, հնդկական, այսպես ասած վերածնության, որ կոչվում է բազգյաշթ և անհանգ բանաստեղծության, որ ասում են շերե նո (նոր բանաստեղծություն): Թվում է, թե Իմամ Խոմեյնին լինելով 20-րդ դարի գրական մտքի ներկայացուցիչ, ճանաչելով եվրոպական և պարսից նոր պոեզիան, պետք է դառնար անհանգ բանաստեղծության, ժամանակակից բանաստեղծության ջատագով, սակայն նա ստեղծագործեց դասական արուզի համակարգով, ավանդական ժանրային ձևերով: Ճիշտ է, նա երբեմն խորասանյան պարզ ոճն է շարունակում, բայց իր ստեղծագործության պոլիթեմատիկ, բազմաթեմատիկ, սուֆիական, այսինքն՝ միստիկական սիմվոլներով, դորանյան ռեմիլիստենցիաներով և դիցաբանական մոտիվներով հագեցած ղազալի ներկայացուցիչ էր, որով լրացնում էր իրաքյան ոճի բանաստեղծների շարքը: Խոմեյնին քնարերգու է, իսկ քնարերգությունը պատմական է: Ինչպիսի ավանդական ձևեր էլ այն ստանա, միևնույն է նրա արժեքը որոշվում է պոետի անհատականության միջով անցած դարի և ժամանակի բեկումով: Այդ է պատճառը, որ քառյակը, որ դարերի ընթացքում խիստ օրենքների է ենթարկվել, ձևական օրենքների, նա երբեք հանգը չպիտի փոխեր և ժամանակի ընթացքում բովանդակության կոմֆորմիզացիայի է ենթարկվել, իր փոքր, ճկուն ծավալով արձագանքել է դարի անցուդարձին: Խոմեյնիի դիվանում ավանդական այդ ձևը՝ քառյակը, որը սիրային, խոհական, միստիկական, փիլիսոփայական, ներբողային, երգիծական ձևեր ուներ, մենք տեսնում ենք քաղաքականը՝ այս պարագայում Իրանի հեղափոխությունն արտացոլողը: Օրինակ, թող հավերժ լինի իսլամական մեր պետությունը (ջոմհուրիե էսլամիե մա ջավիդ ասթ, ջոմհուրիե մա նեշանգյարե էսլամ ասթ), այսօր իսլամի զինանշանն է մեր պետությունը և այլն: Ինչ վերաբերում է Խոմեյնիի քառյակների հանգավորմանը, ապա դրանք ավանդական հանգավորումն են պահպանել: Գազելը Իմամ Խոմեյնիի նախասիրած ժանրային ձևն է, նրա դիվանը բովանդակում է մոտ 150 բազմաթեմատիկ ղազալ: Իզուր չենք շեշտադրում թեմաների լայն սպեկտորը: Ղազալը

մինչև քնարերգության ինքնուրույն ձև դառնալը զարգացման երկար ճանապարհ է անցել և Հաֆեզի պոեզիայում իր կատարյալ և չափանշային ձևն ստացել: Հաֆեզի ղազալը սովորաբար թեմաների մի փունջ է՝ միավորված խիստ միջնորդավոր, երբեմն թաքնվող զուգորդական կապերով, որոնք գազելին հաղորդում են որոշակի միասնություն,միասնություն ոչ թե տրամաբանական այլ զգացմունքային, տրամադրության միասնություն: Քննել Խոմեյնիի պոեզիայի առանձնահատկությունները առաց նշելու նախորդների ազդեցությունը, կնշանակի կտրել նրա բանաստեղծական արվեստն այն շարժուն և կենսունակ հողից, որի վրա մերձենում են համամարդկային արժեքները դարից դար փոխանցող պոետները: Այո՛,Խոմեյնիի պոեզիան ձևավորվել է ոչ առանց Սանայիի, Ռումիի, Սաադիի, Հաֆեզի և այոց ազդեցությամբ, սակայն փույթ չէ, հենց իր՝Հաֆեզի ղազալները մեկ անգամ չէ, որ մեզ տանում են դեպի պարսից պոեզիայում չափանիշներ դարձած պոետները: Օրինակ, Հաֆեզը իր « Սիրտս դարդով լիքն է, ախ եթե լիներ մի սպեղանի» ղազալի նախավերջին բեյթում նույնությամբ կրկնում է իր նախորդի՝ Ռուդաքիի հանրահայտ տողը՝ քյազ նասիմե բույե մույե ջուլյան այադ համի: Իմամ Խոմեյնիի ստեղծագործությունների հրատարակության հանձնաժողովի կողմից գրված վերլուծական առաջաբանում կա երկու հատված, որոնցից մեկը նվիրված է նախորդներից ստացած ավանդույթների խնդրին, մյուսը՝ ժամանակից պոեզիայի վրա Խոմեյնիի թողած ազդեցությանը: Ավանդապահության և նորարարության այդպիսի սինթեզն էլ ապահովում է գրականության զարգացման անընդհատությունը: Իմամ Խոմեյնիի դիվանում կան ղազալներ, որոնց սկիզբը, մուտքը Հաֆեզի գազելի առաջին կիսատողով է սկսվում և դա արվում է ի ցույց ամենքի, Խոմեյնին չի թաքցրել իր ազդեցությունը Հաֆեզից: Այն արաբերեն է: Այդօրինակ յուրահատուկ, տպավորիչ և գեղեցիկ սկիզբը պոետիկայի արվեստում ընդունված էր, որպեսզի բանաստեղծությունը հիշվեր, այդպիսի արժանահիշատակ ու հրաշալի մուտքով նրանք սկսում էին, որ կոչվում էր գեղեցիկ մուտք (հոսն ալ մաթլա՛): Հաֆեզը արաբերեն այդ խոսքերով սկսում է իր բանաստեղծությունը, որ նշանակում է. « Արի սաղի, լից գավերը, տուր բոլորին, որ խմեն, քանի որ սերը, որ սկզբից ինձ շատ հեշտ էր թվում, շատ բարդացավ»:

Հայտնի է, որ Հաֆեզը ինքն էլ, ըստ ավանդության, այդ տողը քաղել

է մեկ այլ բանաստեղծից, այսինքն՝ Հաֆեզն ինքն էլ է օգտվել: Ի դեպ առավել կամ նվազ չափով այդ ազդեցությունները և այդ ցիտատները, մեջբերումները հատուկ են բոլոր ժամանակներին և բոլոր ժողովուրդներին: Երբ , օրինակ, Պետրարկայի բանաստեղծություններից մեկում նրա քարտուղարը հայտնաբերում է Վերգիլիոսի մի խոսքը, մի տողը, ապա Պետրարկան արդարանում է, ասելով, թե թող ների իրեն Վերգիլիոսը, քանի որ ինքն էլ ժամանակին օգտվել է Հոմերոսից և Լուկրեցիոսից:

Պարսից մեջ այդ օգտվելը, իրարից օգտվելը շատ հետաքրքիր մի ֆենոմեն էր, դա ընդունված էր և դա գովերգվում էր: Օրինակ՝ նրանց հեղինակներից մեկը Նիզամի Արուզի Սամարղանդին, որ մեզ հետաքրքիր մի տեղեկություն է թողել, ասում է, որ բանաստեղծական արվեստում միջնադարում ոչ մեկը չէր հասնի կատարելության, եթե անգիր չիմանար 20000 տող իր նախորդների և 10000 տող իր ժամանակակիցների ստեղծագործություններից: Դուք պատկերացնու՞մ եք, եթե մեկը իմանար 30000 տող և իր ժամանակակիցների և իր նախորդների, ապա դա ինչ ֆունդամենտ պետք է ստեղծեր նրան ստեղծագործելու համար: Գեղարվեստական այդ հնարքն այնպես էր օրինականացված իրար օգտագործելու և իրարից օգտվելու, որ միջնադարյան պոետիկայի արվեստում դրանք բնորոշելու տարբեր ձևեր կային, այն ինչ որ մենք անվանում էինք երբեմն պատասխան, երբ որ աշուղները իրար դիմաց նստում են և մեկը ասում է, իսկ մյուսը պատասխանում, նրանք ասում են թաղլիջ, նազիրե, թազմիր, ջավաբ: Ինչպես համոզվեցինք վերը նշված օրինակով մեջբերումներն այնքան ընդգծված են լինում, որ հարկ չէր լինում փնտրել բնօրինակը: Շատ անգամ նմանակումն ուղղված էր լինում մեկ այլ բանաստեղծության կամ հանգին, կամ չափին կամ պատկերին: Միջնադարյան պոետիկայի տեսաբան Առ-Ռադուիանին գրում է, որ բանաստեղծը մեկ ուրիշի բեյթը կամ տողը, երկտողը տեղադրում է իր քերթության մեջ, որը հարգանքի դրսևորում էր և ոչ թե յուրացնելու ցանկություն: Խոմեյնիի ղազալի առանձնահատկություններից մեկը դա բեյթի անկախությունն է, երբ մի գազելի մեջ բոլոր տողերն անկախ են: Այդօրինակ գազելները դառնում են տարբեր թեմաների, մոտիվների միացություն, որոնք իրենց բազմազանությամբ հանդերձ ներքին տրամաբանական մի

միասնություն ունեն: Դրանք այլաբանական են, դրանց թեմաներն են սերը տարբեր մոդիֆիկացիաներով, բարեկամությունը, կնոջ գեղեցկությունը, կյանքի ունայնությունը, ճակատագրի փոփոխականությունը, գարնան զարթոնքը և այլն: Այդ ամենը ուղեկցվում է սաղի, ռենդ, դիվանե, մաջնուն, շեյխ, մորշիդ, էշղ, խանեգար, սրանք բոլորը տերմիններ են, որտեղ գինի, մատռվակ, դա երկրորդ իմաստ ունեցող բառեր են, որովհետև երբ սիրային բանաստեղծությունը Խոմեյնիի վերլուծում ենք, ապա տեսնում ենք, եթե այդ միստիկականի քողը, երկրորդ ալեգորիայի քողը վրայից հանենք, ապա դառնում է սովորական սիրային, բայց դրանք սովորական սիրային չեն, դրանք Աստծուն նվիրված բանաստեղծություններ են: Աստվածային սիրո գաղտնիքն է, որ հիմնական թեման է Խոմեյնիի և ղազալների, և ռոբայիների, և նրա ամեն մի ղազալի քննությունը մեզ մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ նա ձևավորվել է որպես բանաստեղծ պարսից գրականության նախկին լավագույն ավանդույթների վրա և պարսից գրականությունը հենց այդ ձևով տրադիցիաների և նորարարության այդ տարափոխումով և սինթեզով շարունակում է իր բնականոն ճանապարհը:

Հայ իրանական մշակութային «ՄԻՀՐ» ակումբի նախագահ ՎԱՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ. «Իմամ Խոմեյնու խոհերը գիտության և կրթության մասին»

20-րդ դարի վերջին Իմամ Խոմեյնու հայտնությունը հուժկու շարժիչ ուժ դարձավ ճեղքելու համար մթությունն ու տգիտությունը հնագույն մշակույթ ունեցող Իրանում և խթան հանդիսացավ հետհեղափոխական անառարկելի զարգացումներին հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Այսօր ես Ձեր ուշադրությանը կներկայացնեմ Իմամ Խոմեյնու՝ մշակույթի և մասնավորապես գիտության ու կրթության խնդիրներին առնչվող մտքերը:

Իմամ Խոմեյնին մշակութային բարեփոխումները համարում էր ամենաառանցքայինն իսլամական հեղափոխության մեջ: Հեղափոխու-

թյան հաղթանակից անմիջապես հետո և ժամանակավոր կառավարության ստեղծման օրերին նրա առաջնային քայլերն ուղղված էին մշակութային բարեփոխումների խնդիրներին: Նա իր ելույթներում և ուղերձներում մշտապես անդրադառնում էր իսլամական հեղափոխությանը հարիր մշակութային բարեփոխումներին:

Ըստ նրա մշակութային ցանկալի բարեփոխումները պետք է հետապնդեն հետևյալ նպատակները՝

1. Լիարժեք աստվածապաշտ մարդու դաստիարակություն
2. Մշակութային հետամնացության վերացում
3. Պայքար արատավոր երևույթների դեմ
4. Անկախ մշակույթի ստեղծում

Իմամ Խոմեյնու պատգամներին համահունչ սահմանադրության 3-րդ դրույթի համաձայն ԻԻՀ կառավարությունը պարտավոր է ստեղծել՝

- Բարենպաստ միջավայր բարեկրթության մակարդակի բարձրացման համար
- Բոլոր բնագավառներում հասարակության իրազեկության մակարդակի աճ ԶԼՄ-ների ճիշտ օգտագործման միջոցով
- Համընդհանուր անվճար կրթության ապահովում, բարձրագույն կրթության տարածում և դրա հետ կապված արտոնություններ
- Քննարկման ոգու և հմտության ուժեղացում գիտության, տեխնիկայի և մշակույթի բոլոր բնագավառներում՝ հետազոտական կենտրոնների ստեղծման և հետազոտողների քաջալերման միջոցով

Միանգամայն ակնհայտ է, որ հեղափոխությունից հետո հասարակության բոլոր խավերին հասու էին համալսարանական, մշակութային, դպրոցական և այլ կառույցները: Օրինակ ԲՈՒՀ ընդունվողների քանակը մինչ հեղափոխությունը կազմում էր 150 հազար իսկ արդեն վերջին տարիներին այն հասել է 1,5 միլիոնի:

Իմամ Խոմեյնին ասում էր՝

- Կյանքի ամբողջ ընթացքում պետք է սովորել
- Համալսարանը մարդ կերտելու դարբնոց է, որտեղ նախ մարդկայնություն է սերմանվում և հետո միայն գիտություն կամ մասնագիտություն
- Համալսարանականները ապագայի պետական այրերն են, ուստի պետք է նրանց հասունացնել, որպեսզի կարողանան իրենց երկիրը

ճիշտ ղեկավարեն

- Համալսարանականների շերտը հասարակության ամենագիտակ շերտն է, որի համար պետք է անհրաժեշտ ներդրում կատարել

Իմամի խոսքերում համալսարանի և կրթության դերի առնչությամբ կարելի է հարյուրավոր մտքեր գտնել, որոնցից յուրաքանչյուրը կարող է շարժման մի առանձին սկիզբ հանդիսանալ:

Նա շեշտում էր՝ գիտությամբ է, որ մարդը կարողանում է ապահովել աշխարհի երջանկությունը: Ուսումն է, որ դաստիարակում և կրթում է երիտասարդությանը և եթե մեր երկիրը գիտությանն ու կրթությանը զարկ տա, ապա ոչ մի ուժ չի կարող նրան իշխել: Պատմության ամբողջ ընթացքում ունեցած մեր անհաջողությունների հիմնական պատճառը հետամնաց մարդկանց կամ ժողովրդի շահագործումն է եղել: Համալսարաններում, ուսումնարաններում և նման այլ հաստատություններում ուսանողի կամ դասախոսի ուսուցմանը զուգահեռ անհրաժեշտ է նախ նրանց լիարժեք մարդ դաստիարակել: Շատ է պատահում երբ անձը գիտության մեջ հասնում է բարձունքների, սակայն մարդկային դաստիարակությունից զուրկ նման անձանց հասցրած վնասը երկրին ու ժողովրդին շատ ավելին է քան մյուսներինը:

Իմամ Խոմեյնին խրատում էր՝ մենք մինչև չհասկանանք թե ինչ էինք, պատմության մեջ ինչ էինք, ինչ ենք այժմ և ինչ ունենք, անկախություն չենք ունենա: Մինչև ձեր միտքը անկախ չլինի, ձեր երկիրը անկախ չի լինի: Համալսարանները պետք է ձգտեն անկախ մտածելակերպով երիտասարդներ պատրաստել, որոնք և պետք է հասկանան թե ինչ մեծ մշակույթ ունեն և որ այն այստեղից է արտահանվել, հասկանան, որ մենք էլ աշխարհում մեր տեղն ունենք և ուզում ենք ինքներս մեզ կառավարել: Դուք համալսարանականներդ առաջին հերթին պետք է մարդ դաստիարակեք և եթե դա անեք, ապա ձեր երկիրը կփրկեք:

90-ական թվականների սկզբին Իրանը ձեռնամուխ եղավ գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորային աշխատանքների (ԳՀՓԿԱ) ազգային ծրագրի կատարելագործմանը: Երկրի կառավարությունը նախանշել է գիտատեխնիկական քաղաքականության երեք հիմնական բնագավառները՝ **կրթություն, տեխնոլոգիա և գիտություն**: Գիտության հանգուցային ճյուղեր են ընտրվել **մեջուկա-**

յին ֆիզիկան, քիմիան, էլեկտրոնիկան և հրթիռային տեխնոլոգիան: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գնահատմամբ 90-ականների կեսերին Իրանում յուրաքանչյուր 100 հազար բնակչությանը ընկնում էր ընդամենը 11 գիտական և ինժեներատեխնիկական աշխատող (օրինակ Իսրայելում դրանց թիվը հասնում էր 570-ի): Միևնույն ժամանակ բարձրագույն մասնագիտությամբ կադրերը կազմում էին ամբողջ գիտաշխատողների ընդամենը 7 տոկոսը:

Գիտական կադրերի խնդրի լուծման համար Թեհրանը ձեռնամուխ եղավ մի շարք համալիր քայլերի: Նախ որոշվեց ավելացնել ԲՈՒՀ ավարտողների քանակը:

Սրան զուգահեռ բազմաթիվ ուսանողներ և ասպիրանտներ ուղարկվեցին արտասահմանյան հեղինակավոր համալսարաններ: 90-ականների կեսերին արտասահմանում սովորում էին ավելի քան 25 հազար իրանցի ուսանողներ և ասպիրանտներ, այդ թվում միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում մոտ 11 հազար և Ռուսաստանում մոտ 2 հազար:

Տարվում է հատուկ քաղաքականություն արտերկրների գիտահետազոտական կենտրոններում աշխատող իրանցի գիտնականների հայրենիք կամավոր վերադարձի ուղղությամբ: Նրանց համար Իրանում ստեղծվում է ֆինանսական, կենցաղային և աշխատանքային բարենպաստ պայմաններ: Արդյունքում սկսեցին հայրենիք վերադառնալ բազմաթիվ տարագիր մասնագետներ: Երկրի տնտեսության առաջընթացն ապահովելու համար ներգրավվում են նաև օտարերկրյա գիտնականներ:

Օրինակ համաձայն Ստոկհոլմի աշխարհի պրոբլեմների միջազգային հետազոտությունների 1999թ տվյալների, մոտ 10 հազար ռուս գիտնականներ աշխատում են Իրանի գիտական կենտրոններում:

Ձեռնարկված քայլերի արդյունքում այժմ Իրանում գործում են 7 խոշոր միջուկային հետազոտությունների կենտրոններ և իրագործվում է ևս 10 նոր կենտրոնների հիմնադրում: Յուրաքանչյուր խոշոր ձեռնարկությունում կազմակերպված են ժամանակակից սարքավորումներով հագեցված գիտահետազոտական կենտրոններ և լաբորատորիաներ: Այսպիսով պետք չէ զարմանալ այն լուրերի կապակցությամբ, որ Իրանը արդեն մշակել է մարդատար ինքնաթիռի իր սեփական մոդելը և փորձարկում է հրթիռային տեխնիկայի ժամանակակից նմուշներ:

Ընդհանուր առմամբ այս բոլորը վկայում է այն մասին, որ Իրանն ի շարս այլ Եվրասիական պետությունների, ունի անհրաժեշտ ներուժ ներկայիս պայմաններում իրականացնելու իր սեփական քաղաքակրթական մոդելը: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս մոդելը իր համամարդկային չափորոշիչներով և պարամետրերով գերազանցում է տարածաշրջանի երկրների, մասնավորապես Թուրքիայի և Իսրայելի հասարակական կառուցվածքները:

Իմամ Խոմեյնու հիմնադրած ԻԻՀ բացառիկ առաջընթացը գրեթե բոլոր բնագավառներում արդյունք է այն հոգատար, խելամիտ և հեռատես քաղաքականության, որը ցուցաբերվում է այս երկրում կրթության, գիտության և ընդհանրապես մշակույթին ասպարեզներում:

ՀՀ պետական մանկավարժական համալսարանի բժշկագիտության ամբիոնի վարիչ ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Իմամ Խոմեյնին և արևմուտքը»

Արևմտյան նոր քաղաքակրթության ի հայտ գալուց և տարածումից հետո ի հայտ եկան երկու տարբեր կողմեր, առաջինը՝ գիտական և մասնագիտական, որը պայմանավորված էր գիտության տարբեր բնագավառներում նորամուծություններով և քաղաքական և հասարակական կառավարման նոր գաղափարներով, իսկ երկրորդը՝ գաղութատիրությունն ու գերիշխումը, և այս երկերես քաղաքակրթության հետ շփումը Արևելքի և հատկապես Իրանի ժողովուրդների համար դարձավ հիմնական և կարևորագույն խնդիրներից մեկը: Եվ այս ազգերը կանգնեցին բարդ ընտրության առջև: Քանի որ մի կողմից նրանք ցանկանում էին հետ չմնալ նոր քաղաքակրթության գիտական առաջընթացից և փորձից, իսկ մյուս կողմից՝ խուսափում էին և չէին կարող հանդուրժել Արևմուտքի գաղութատիրական գերիշխանությունը:

19-րդ դարի նախաշեմին, երբ Եվրոպան, օգտվելով ժամանակակից ձեռքբերումներից, կարողացել էր տարբեր ազգերի քաղաքակր-

թությունները խառնել և ոչ եվրոպական ազգերը, այդ թվում նաև իսլամական երկրները, հայտնվեցին ներքին և արտաքին անբարենպաստ վիճակում: Արևմտյան նոր քաղաքակրթության տարածումը այս շրջանում ոչ արևմտյան պետություններին դրեց պրիզմայածև իրադրության մեջ: Քանի որ երբ պրիզման հայտնվում է լույսի ճանապարհին, ապա խանգարում է նրա շարժմանը, խափանում է միասնությունն ու տարբեր երանգավորումներ տալիս նրան:

Իմամ Խոմեյնին, արևմուտքի առումով առաջարկեց խնդրի լուծման այնպիսի մի ուղի, որը կարելի է անվանել «վերադարձ դեպի իսլամական ինքնություն» անվամբ: Իմամն այս ուղին կառուցեց լուսավոր և պայծառ կերպով: Այս ճանապարհին մերժվում են արևմուտքի բոլոր խորհրդանիշները, և ոչ թե պատահականորեն այլ ուշադրությունը սևեռելով երկու կարևոր փաստի վրա, որոնք են՝ արևմտյան նոր քաղաքակրթության դրական և բացասական կողմերը՝ որպես օբյեկտիվ երևույթ և իսլամական ինքնության բազմաթիվ կողմերն ու դրանց պաշտպանության համաչափ եղանակները: Եվ այստեղ է, որ կարելի է հենվելով իսլամական ինքնության դրական կողմերի վրա խուսափել բացասական կողմերից և հետևանքներից:

Մյուս կողմից՝ Իմամ Խոմեյնու կարծիքով Արևմուտքի մերժումը ճիշտ վարվելակերպ չէ, քանի որ Արևմուտքի նոր քաղաքակրթությունը մի տարածական և ընդլայնվող իրականություն է: Այս առումով ի տարբերություն մյուսների, որոնք բացարձակ մերժում էին արևմուտքը, Իմամի համոզմունքն էր. « ...մենք երբեք չենք մտնի կյանքի փակ դռները և ընդունում ենք արևմտյան քաղաքակրթությունը, սակայն չենք ընդունում նրա անբարոյականությունը: Մենք ընդունում ենք արևմտյան աշխարհի զարգացումը սակայն չենք ընդունում այն անառակությունները, որոնցից տրտնջում են նաև իրենք»:

Իմամը չէր փակում իր աչքերը առկա իրողության վրա և ասում էր արևմուտքից սպառնացող վտանգի մասին: Սակայն դրանցից պաշտպանվելու ուղին չէր համարում դրանց մերժումն ու պարիսպների ետևում թաքնվելը: Նա հավատացած էր, որ հարկավոր է լավ ճանաչել արևմտյան քաղաքակրթության բացասական կողմերը, որպես օբյեկտիվ երևույթ և իսլամական հասարակությունը զինել ժամանակին և իրավիճակին պատշաճ և ճիշտ գաղափարներով և առճակատման

դուրս գալ արևմուտքի հետ:

Իմամ Խոմեյնին ստեղծեց արևմուտքի հետ շփվելու մի ուրույն ճանապարհ, որի ընթացքում վերաճանաչվում են արևմտյան քաղաքակրթության տարբեր կողմերը: Այս գործընթացի արդյունքում առանձնացվում են արևմտյան նոր քաղաքակրթության գաղափարախոսության և փորձառության ասպարեզի դրական դրույթներն ու անողորմ գաղութիրական և զավթողական դրույթները:

Արևմուտքի հետ առճակատման հարցում Խոմեյնին համոզված էր, որ հարկավոր է .

-Վերադարձ դեպի կրոնն ու ազգային ինքնությունը

Իմամի կոչը մուսուլմաններին՝ դեպի իսլամ դարձի առումով, ամենևին հետադիմական իմաստով չէր: Այլ մի գործնական միջոց էր անինքնությունից և կախվածությունից ձերբազատվելու և առաջադիմական գաղափարներով օժտված հնագույն մի ինքնության վերածնունդի համար: Այս առումով նա նշել է. «... Մենք ցանկանում ենք վերադառնալ 1400 տարի առաջվա արդարությանը ոչ այն առումով, որ մեր կենցաղը դառնա այնպիսին, այլ գրկաբաց կընդունենք մեր քաղաքակրթության բոլոր խորհրդանիշները: Քանի որ այն ինչ-որ պրոպագանդվում է ներկայումս քաղաքակրթական խորհրդանիշներ չեն: Իսլամական կառավարությունը հետադիմական չէ և ընդունում է քաղաքակրթական բոլոր խորհրդանիշները, բացի նրանցից, որոնք խաթարում են մարդկանց հանգիստն ու վտանգում հասարակության բարոյականությունը»:

Իմամ Խոմեյնիի կարծիքով, կրոնական մնայուն արժեքներ հանդիսացող հասարակական արդարությունը, բարոյականության պահպանումը սազական են բոլոր ժամանակներին: Ըստ նրա՝ այսօր իսլամը ենթարկվում է կեղեքման և հարստահարության: Իսլամական ուսմունքն աշխարհը ծաղկեցնելու և մուսուլմանների հանդերձյալ կյանքի համար է:

-Զգոնություն և քաղաքական աճ

Իմամը իսլամական երկրների վրա արևմտյան գաղութային տիրապետության պատճառ է համարում արևելյան ազգերի քաղաքական աճի բացակայությունը և անփութությունը: Ուստի նրանց տիրապետությունից ազատվելու և անկախության առաջին քայլը համարում էր

մարդկանց զգոնությունը: Այս առումով նա նշել է. «... Եթե որևէ ազգ ցանկանում է կանգնել իր իսկ ոտքերի վրա, նախևառաջ պետք է արթնանա »: Այսինքն արևմտյան կախվածությունից ազատվելու առաջին քայլը պետք է լինի մեր արթունությունը, մենք պետք է հասկանանք, որ մենք էլ ենք հասարակության անդամ և այլ տերություններն ու համակարգերը մեզանից ոչնչով առավել չեն: Նա կրթված երիտասարդներին առաջարկում է «խուճապի չմատնվել ստեղծված իրավիճակից և հանդես բերելով զգոնություն, լինել առավել համախոհ և համաքայլ»:

-Դիմակայում արևմտյան գաղութային տիրապետմանը

Արևմտյան գերիշխանությունից ազատվելու հաջորդ քայլը սեփական ինքնության ճանաչումից, մարդկանց պայքարն է ամեն տեսակի օտար տերությունների և խոշտանգումների դեմ:

-Միասնություն՝ գաղութատիրական վարչակարգերի դեմ պայքարելու համար

Անհրաժեշտ է, որպեսզի բոլոր մարդիկ այս ճանապարհին ցուցաբերեն միասնություն: Համախմբվածության և միասնության պակասը կարող է հանգեցնել տարածաշրջանի երկրների հանդեպ գաղութատիրական վերաբերմունքի դրդապատճառների: Այն ինչ եկել է մուսուլմանների գլխին, մեծ տերությունների պատճառով է, և մուսուլմանների միասնությունն է, որ պետք լուծի նրանց դժվարությունները:

Հենց այս ուսմունքով էլ Իմամ Խոմեյնին կարողացավ առաջնորդել Իրանի ժողովրդի հակագաղութային և հակակեղեքչային շարժումն ու պարգևել Իրանին անկախություն և ազատություն:

-Սեփական ազգի վրա հենվելը

Ազգերը պետք է ջանան խուսափել մեծ տերությունների քաղաքական, մշակութային, տնտեսական և ռազմական կախվածությունից: Քանի որ օտար միջամտությունների առկայությամբ կարող է խաթարել տվյալ ազգի անկախությունը, աճն ու ազատությունը:

Ինքնավստահությունն ու սեփական ազգի վրա հենվելը պայմանավորված է մտավոր կախվածության դադարումից: Քանի որ իմաստով, մտքի անկախությունը հանդիսանում է սեփական ուժերի վրա հենվելու ամենակարևոր գրավականը, ապա Խոմեյնին այս առումով ավանդում է. « Գնացեք և մտածեք այն մասին, որ ազատեք ձեր միտքը, մեր համալսարանները թող ջանան ազատ և անկախ կրթել մեր երիտասարդներին, որպեսզի նրանք հասկանան, որ առանձին մշակույթ ունեն, և մենք ցանկանում ենք ինքներս ղեկավարել մեզ»:

-Հասարակ կենցաղ և պճնեղենից խուսափում

Գաղութային տիրապետությունից խուսափելու կառավարության հաջորդ գործնական քայլը սովորական ապրելն ու պերճանքներից խուսափելն էր: «... ուրեմն, եթե ցանկանում եք անիրավների առջև կանգնել աներկյուղ և համարձակ և պաշտպանել ձեր իրավունքներն ու նրանց սատանայությունն ու չարիք ծնող զենքերը չազդեն ձեր հոգու վրա և ձեզ ասպարեզից չհեռացնեն, սովորեք ապրել հասարակ կյանքով և սրտանց խուսափեք պերճանքի իրերից և բարձր պաշտոններից»:

Արտերկրյա կախվածության աղբուրն այն է, որ մարդն ու հասարակությունը դեռ ամբողջովին չեն ազատվել սատանաների ազդեցությունից և գաղութային գերիշխանության դեմ պայքարելու համար պետք է ձերբազատվել աշխարհի հետ մրցակցությունից և զինվել հավատքով և վստահությամբ:

-Երիտասարդ սերունդների ճիշտ դաստիարակում

Գործնական հաջորդ քայլերից մեկն այն է, որ եթե կառավարությունները ցանկանում են , որպեսզի իրենց երկրները չհանդիսանան կեղեքման և գաղութատիրության զոհ, ապա պետք է ջանան կազմակերպել ազգի հոգևոր և ազգային դաստիարակությունը: Նրանք պետք է զգան շահագործման և կեղեքման վտանգն ու հնարավորինս շուտ կանխել դրանք: Երկրի ապագա ազատությունն ու անկախությունը անմիջականորեն պայմանավորված է սերունդների ճիշտ դաստիարակման գործընթացից:

Իմամ Խոմեյնին մարդկանց իրազեկ է պահել արևմտյան երկրների քաղաքական գերիշխումից, անառակությունից, անբարոյականություններից և շեղումներից և դրանք համարել մեծ չարիք, որոնք հնարավոր են աննպատակ և անտեղի վերաբերմունքի շնորհիվ և սպառնալ իսլամական և ոչ իսլամական երկրներին:

«ՄԻՀՐ» ամսագրի գլխավոր խմբագիր պր-ն ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ.

«Իմամ Խոմեյնու փիլիսոփայության հեղափոխականությունը»

Իրանի առաջնորդի փիլիսոփայությունը միայն կյանքի ճանաչումը չէր: Նրա իսլամական ուսմունքի նպատակն Իրանի ժողովրդի ազատության ապահովումն էր: Դաջարների հարստությունը ճանապարհ էր բացել անգլիացիների, ապա նաև ամերիկացիների համար: Խոմեյնու ուսմունքի առանցքը կազմում էր օտարներից երկրի ազատագրումը, իշխանությունը ժողովրդին հանձնումը: Բայց քանի որ դա անհնարին էր խաղաղ ճանապարհով իրականացնել, նա ստիպված եղավ հեղափոխության կոչ անել: Եվ այնպես կարողացավ ապահովել, որ այդ հեղափոխությունը հնարավոր եղավ իրականացնել անարյուն, ժողովրդի ամբողջ զանգվածներին փողոց հանելով: Շահն ու նրա պաշտպան օտարերկրացիները ստիպված եղան գլուխները վերցնել ու փախչել երկրից: Իսլամական հեղափոխության ամենամասսայականությունն այն դարձրեց ամենահաղթ և իրականացավ ամբողջ ժողովրդի կողմից: Դրանով կարելի է բացատրել այս հեղափոխության գլխավոր տարբերությունն աշխարհի մյուս բոլոր հեղափոխություններից:

Խոմեյնին, համախմբելով հոգևորականներին, նրանց միջոցով առաջնորդեց հեղափոխությունը: Մզկիթը դարձավ միլիոնների կազմակերպիչը, նրանց ոգևորողը: Թասուան ու Աշուրը ժողովրդական շարժման բարձրակետերն էին: Հենց հավատի համար կյանքը տալու իսլամական գաղափարը ժողովրդին մղեց հերոսության, շահական դահիճների գնդակի դեմ համարձակորեն ելնելու քայլին, քանի որ հանուն Աստծո մահը համարվում էր մեծ հաղթանակ:

Մշակելով հեղափոխական ուսմունքը, Խոմեյնին նրա հիմքում դնում է շատ կարևոր մի գաղափար, որի մասին հայտարարում է. «Կամ մենք կկտրենք իսլամին ու Ղորանին դավաճանողների ձեռքերը, կամ կհամբարձվենք դեպի Արարիչը»:

Կյանքի կամ մահվան այս գաղափարը ժողովրդին ծանր վիճակից ազատագրելու հախուռն ցանկության արդյունքն է, որ կուտակվել է մարդկանց անասելի ծանր վիճակից և խթան է դառնում հաղթելու համար:

Շահը չկարողացավ Խոմեյնու հեղափոխականությունը մարել ոչ նրա դեմ զանազան խարդախություններ կազմակերպելով ու նույնիսկ որդուն սպանելով և ոչ էլ աքսորով: Խոմեյնին մնաց որպես աննկուն հեղափոխական, քանի որ նա համոզված էր, որ ինքն արդար է ու կկարողանա ժողովրդին հաղթանակի տանել:

Նրա հեղափոխական ուսմունքի հիմքում ընկած էին ինքնակալության տապալման, գաղութային լծից ժողովրդի ազատագրման և իսլամի վերածնունդի ապահովման խնդիրները:

Այս պահանջներից էլ բխում են նոր ուսմունքի յուրահատկությունները, որոնք ամփոփվում են մարդկանց առօրյան վերափոխելու, նոր կյանք կերտելու, քաղաքական, տնտեսական և, որ ամենագլխավորն է, հոգեկան-մշակութային ազատություն ապահովելու մեջ:

Սա է Խոմեյնու փիլիսոփայության դիալեկտիկան:

Բայց Իրանի առաջնորդը չի սահմանափակվում հեղափոխության ուսմունքի մշակմամբ: Նա ստանձնում է հեղափոխության մեծ կազմակերպչի դերը,անվախորեն անցնելով վիթխարի զանգվածների գլուխը ; Նա դարձավ երկրի հոգևոր կյանքի իսկական վերափոխիչ:

Իմամ Խոմեյնին կարողացավ Իրանի ժողովրդին փրկել շահական և օտարերկրյա բռնակալների ծանր լծից, համախմբել նրան ու հաղթական պայքարի տանել, քանի որ առաջին հերթին թափանցեց նրա հոգու խորքերը, նրան հաղորդեց կյանքի ճշմարտությունը, բացելով աստվածային անարատ ուղին:

Ուսումնասիրելով հեղափոխության բոլոր տեսությունները, նա համոզվեց, որ մարդկության առաջընթացը միայն տնտեսական, քաղաքական ու սոցիալական խնդիրների լուծումով չէ, որ իրականություն է դառնում, անհրաժեշտ է նաև հոգևոր պահանջների բավարարում: Եվ նա, ինչպես նշում է Անկարայի համալսարանի իսլամագիտության պրոֆեսոր Շեյխ Դումանը, կարողացավ շատ բան անել Ղորանի գաղափարները կյանքում կենսագործելու և դրանցով մուսուլմաններին համախմբելու ուղղությամբ: Փաստորեն նա իսլամը դարձրել է հեղափոխության հիմնական խթան: Հասկանալի է, թե Իմամն ինչու էր ասում. «Աշխարհի բոլոր կառավարությունները պիտի իմանան, որ իսլամն ամենահաղթ է: Իսլամն ու Ղորանը կնվաճեն ամբողջ աշխարհը»:

Իմամ Խոմեյնին, հենվելով իր նախորդների հոգևոր նվաճումների վրա, մի նոր աստիճանի բարձրացրեց շիիթական սուրբ մշակույթը: Նա իր ամբողջ էությամբ հավատում էր իսլամին և այդ հավատով էլ առաջնորդվել է դեպի հեղափոխություն:

Հասկանալի է, թե ինչու Խոմեյնին պահանջում է իսլամն այնպես քարոզել, որ ապահովվի «Մուսուլմանների և ամբողջ մարդկության միասնությունը և մարդկությունն ազատագրվի ամեն տեսակի շղթաներից»:

Նա ազատությունը համարում է Աստծո պարգև: «Ցանկացած մարդ Արարչից ստանում է ազատորեն ապրելու և իր մտքերն ու համոզմունքն ազատորեն արտահայտելու հնարավորություն,_ գրում է առաջնորդը,-իսկ ազատությունը, որ Աստված տվել է մարդուն, հենված է իսլամի օրենքների վրա և ծառայում է մարդու զարգացմանն ու նրա մերձեցմանն Արարչին»:

Խոմեյնու շնորհիվ իսլամը լոկ հավատից վերածվեց հեղափոխության կազմակերպման, իսկ հեղափոխությունից հետո՝ երկրի ղեկավարման սուրբ գործոնի: Փոխվեց հասարակության մշակութա-բարոյական կառուցվածքը: Դրանով քաղաքական անկախություն ստացած ժողովուրդը ձեռք բերեց նաև հոգեկան ազատություն: Մարդը դարձավ իր իրավունքների տերը: Ստեղծվեցին ազատ մշակույթ կերտելու բոլոր նախապայմանները և Իրանը կարողացավ կարճ ժամկետում հաղթահարել զարգացման դժվարությունները, մոտենալով աշխարհի ամենազարգացած երկրներին: Սա է Իմամ Խոմեյնու հեղափոխական ուսմունքի ամենամեծ ձեռքբերումը: Սրանով է, որ Խոմեյնու ուսմունքը դառնում է համամարդկային:

Իրանական հեղափոխության նոր ուսմունքը զերծ է ազգայնամոլական միտումներից և պաշտպանում է բոլոր ժողովուրդներին: «Ցանկանում եմ նշել,-գրում է Խոմեյնին -որ իմ կրոնաքաղաքական պատգամը հասցեագրված է ոչ միայն իրանական մեծ ժողովրդին, այլև ամբողջ մուսուլմաններին ու համայն աշխարհի հարստահարվածներին, բոլոր ազգերին, ամեն մի դավանանք պաշտողներին»: Նա չի տեսնում ազգային տարբերություններ, հետևաբար նաև հակասություններ: Նրա համար բոլորն էլ հավասար մարդիկ են, Աստծո արարածներ: Նա նույնիսկ որդուց պահանջում է իր մեջ «սեր ներարկել բոլոր կենդանի էակների, հատկապես մարդկանց նկատմամբ»: Հասկանալի է,

որ նրա ուսմունքը համամարդկային է, ընդունվում է աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդների կողմից, քանի որ այն արդար է ու ճշմարիտ:

«Իմամ Խոմեյնին,-գրում է Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին,- հեղափոխական մեծ մարգարե էր և իմպերալիզմի, սիոնիզմի ու միջազգային ամբարտավանության համոզված թշնամի: Կասկածից վեր է, որ նրա անունը հավերժ կմնա իսլամի պատմության մեջ»: Իսկ Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ Ասադի կարծիքով «Խոմեյնին դարձել է այնպիսի հեղափոխական լիդեր, որի ազդեցությունը տարածվել է աշխարհի բոլոր ծայրերում»:

Այն երրորդ աշխարհի համար իսկապես ուղենիշ է: Իրանական հեղափոխությունից հետո նրա ազդեցությամբ նոր հաջողության հասան Լիբանանն ու Պաղեստինը, ազատագրական պայքարն ուժեղացավ Ալժիրում, Եգիպտոսում, Թունիսում, Սաուդյան Արաբիայում և այլ երկրներում:

Խոմեյնու հեղափոխական ուսմունքի կենսագործման շնորհիվ Իրանը ոչ միայն ազատություն ստացավ, այլև այդ երկրի շուրջը համախմբվեցին աշխարհի շատ ժողովուրդներ, որոնց համար Իրանը դարձավ ազատության խորհրդանիշ: Իրանն աշխարհի հավասարակշռությունը փոխեց հօգուտ խաղաղության, անվտանգության, կայունության ու համագործակցության:

Այստեղ պիտի որոնել Խոմեյնու հեղափոխության անգնահատելի արժեքը:

Սա է մեր ժամանակների մեծագույն մտածողի փիլիսոփայության էությունը:

Եվ որպես նոր կյանքի արարիչ, Խոմեյնին նաև դարձավ նոր մշակույթի կերտող:

Իմամ Խոմեյնին Խայամի, Սաադիի, Հաֆեզի և իրանական մյուս գրողների արվեստի շարունակողն է: Նա բանաստեղծությամբ տարվել է 16-18 տարեկանից: Ֆաթեմա Թաբաթաբայի ջանքերով հավաքված նրա «Սիրո գինին» ժողովածուն համոզում է, որ Իրանի անվանի հեղափոխական ու պետական գործիչը նաև մեծ բանաստեղծ էր: Նրա քնարն ընդհանրացնում էր կյանքի փիլիսոփայությունը, սովորեցնելով արժանապատիվ ապրելու ուղին:

«Իմամ Խոմեյնին և դեմոկրատիան»

Իսլամական հեղափոխության հաղթանակը, Իմամ Խոմեյնու քաղաքական և հոգևոր մտքի կուլմինացիոն կետը:

Իսլամը որպես մեկ հավատք կողմ էր հասարակությանն ու մարդկությանը սպառնացող բոլոր խնդիրների լուծմանը:

Այն, որպես կառավարման սկզբունք Իրանում այնպես դրսևորվեց, որ ներկայիս մոդեռնիզացիայի և հետմոդեռնիզացիայի շրջանում, քաղաքական և միջազգային ասպարեզում այս խնդրի ընկալումն ու ընդունումը դարձավ բավականին բարդ:

Այս շարժման ամենաուշագրավ կողմերից մեկը համամարդկային մասնակցությունն էր շարժման կազմակերպմանն ու ողջ ընթացքին: Այս փաստը նպաստեց, որպեսզի քաղաքական քննադատներն իրենց ուշադրությունը սևեռեն կրոնի և դեմոկրատիայի վրա: Մինչև անգամ տարբեր կարծիքներ արտահայտելիս ջանացել են պարզաբանել այդ երկու երևույթների կապը: Քանի որ դրա սկիզբը հանդիսանում էր Իմամ Խոմեյնու հիմնական նպատակը, մենք կաշխատենք ձեր ուշադրությանը ներկայացնել նրա տեսակետը «Դեմոկրատիա» թեմայի վերաբերյալ: Իհարկե սկզբում կներկայացվի դեմոկրատիայի հիմնական իմաստն ու գաղափարախոսությունը, ապա կանդրադառնանք Իմամ Խոմեյնու քաղաքական տեսակետներին և վերջում կպարզաբանենք նրա տեսակետները այս խնդրի շուրջ:

ա) Դեմոկրատիա հասկացությունը

Պատմական տեսանկյունից դեմոկրատիայի երևույթներ կարելի է նկատել դեռևս հույն մեծ մտածողներ Պլատոնի և Արիստոտելի գաղափարախոսություններում: Իհարկե այս երկու մեծ մտածողներն իրենց աշխատություններում էլ դեմոկրատական կառավարման տարատեսակները համարել են որպես հասարակական հաշտության թույլ և անվստահելի տարատեսակ (միջոց):

Պլատոնը վախենում էր այս տեսակ կառավարմամբ հասարակ ժողովրդի խաբեությունից, իսկ Արիստոտելը այն համարում էր մարդկային ամբոխի կառավարման անբարոյական տեսակ: Այնուամենայնիվ, նոր ժամանակները արևմուտքում, հենվելով դեմոկրատիայի վրա, հաղթանակեցին քաղաքական նկարագրի վերականգնման հարցում:

Կառավարման եղանակների ասպարեզում փորձառությունը նպաստեց, որպեսզի դեմոկրատիան համարվի եկեղեցական օրենքներից և ֆեոդալական վարչակարգերից հասարակության փրկության միակ միջոցը: Դեմոկրատիան ժամանակի ընթացքում լայնորեն թափանցեց նաև մյուս հասարակությունների շրջանակները: Միայն վերջին երկու տասնամյակում, քաղաքական կառավարման առումով դեմոկրատական և մարդկանց ընտրության վրա հիմնված պետությունների թիվը 34-ից հասավ 130-ի:

Դեմոկարտիան հունական ծագումով բառ է, որի արմատն է դեմոսը, այսինք մարդը, իսկ թարգմանաբար դեմոկրատիա քաղաքական տերմինը բացատրվում է որպես ժողովրդավարական կառավարում: Դեմոկրատիայի հիմնական հզորացնող ուժը, ինչպես երևում է նաև նրա անվանումից, մարդկանց մասնակցությունն է քաղաքական և հասարակական խնդիրների լուծման հարցին:

Հենց այս առումով,հասարակագիտական առումով, գոյություն ունի իշխանության կառուցման երկու տեսակ: Մեկը՝ միակողմ իշխանություն, իսկ մյուսը՝ երկկողմ: Միակողմ իշխանություն ստեղծելիս որպես քաղաքական իշխանության աղբյուրներ ծառայում են ոչ հասարակական (մարդկային) աղբյուրները և, արդյունքում, հասարակական խմբավորումների քաղաքական բաժանմանը մասնակցելը անհնար է լինում: Այստեղ դեմոկրատական երկրներ ասելով, նկատի ունենք այն երկրները, որոնք ունեն երկկողմ իշխանություն: Այսպիսի վարչակարգերի քաղաքական իշխանության աղբյուրները համարվում են հասարակության անբաժան մասնիկն ու գոյություն ունեն մարդկանց և հասարակական խմբավորումներ, որոնք կարող են միջամտել քաղաքական գործընթացներին:

Պատմական առումով նույնպես 1848 թվ-ի հեղափոխությունից հետո բացահայտվեց, որ լիբերալ բուրժուազիան չի կարող գոյատևել նախկինի նման: Ալեքսեյ Դոտոքվիլն ու Ջոն Ստյուարտ Միլը այնպիսի անձնավորություններ էին, որոնք Ամերիկայում և Անգլիայում պայքարում էին լիբերալների դեմ և աջակցում լիբերալ - դեմոկրատներին: Լիբերալ - դեմոկրատները կողմ էին « Իրավունք բոլորին և բոլոր քաղաքացիների հավասար մասնակցությանը երկրի քաղաքական կյանքին» կարգախոսի տարածմանը և այն համարում են իշխանության ա-

մենաարդար և ամենապատշաճ եղանակը:

Այսպիսով, մենք մի ընդհանուր հայացք նետեցինք դեմոկրատիայի ընդհանուր դրույթներին, նրա պատմությանն ու խաթարող հանգամանքներին: Իսկ ստորև ձեզ կներկայացնենք Իմամ Խոմեյնու քաղաքական վարքագիծը:

բ) Իմամ Խոմեյնու քաղաքական վարքագիծը

Իսլամական կառավարության առումով Իմամի նախաձեռնությամբ հանրապետության բաղադրիչ մասը իսլամականն էր: Մտածողներից մեծամասնության խոստովանությամբ այս նախաձեռնությունը իսլամական ճշմարտության և հանրապետության իրականության լավագույն ներդաշնակումն է: Իսլամական քաղաքական ստրուկտուրայի նման ներկայացում Իրանի պատմության մեջ առաջին նմուշն էր, երբ իշխանությունն ու ժողովուրդը հայտնվեցին կշեռքի երկու նժարին:

Իմամը համոզված էր, որ ոճրագործությամբ և իշխանամետ կառավարությամբ հնարավոր չէ մարդկանց հասցնել իրենց կրոնական պարտականությունների իրագործմանը և առաջնորդել ճիշտ ուղով: Ըստ նրա՝

«Համակարգը պետք է ընտրի այնպիսի ուղի և կարգեր, որոնք հասարակության կողմից նույնպես ընդունելի լինեն, իսկ դրա վառ օրինակը իսլամական հանրապետությունն է»:

«Յուրաքանչյուր ոք իրավասու է յուրաքանչյուր հարցով ղեկավարներից հարցում անել»:

Իմամի կարծիքով, մարդկանց ակտիվ մասնակցությունը մարդկանց դաստիարակման և տեղեկատվության համար ուղարկված երկնային գրքերի դրույթների փիլիսոփայությունն է: Եվ իսլամը, հիմնապես, իր գործունեությունը սկսել է գիտությամբ և տեղեկատվությամբ և քանի որ մարդը հանդիսացել է մարգարեների ուսուցման հիմնական նպատակը՝ ապա ըստ Իմամ Խոմեյնու, իսլամը մարդկության համար հանդիսանում է ամենակատարյալ իրավական արժեք: Սակայն Իմամը լիբերալ դեմոկրատական վարչակարգերին հակառակ, բացատրել և ներկայացրել է «Մարդկանց քաղաքական իրավունքները (ազատություն, հավասարություն և արդարություն)» կարգախոսը՝ Աստծո ուսմունքների և պատվիրանների սահմաններում: Նա համոզված է, որ

յուրաքանչյուր մուսուլման ունի բացահայտման հնարավորություններ և ունակություն, այլ կերպ ասած՝ «ամբողջ ազգը առաջնորդ է և ունի հսկողության և քննադատության կարողություն»:

Ըստ Իմամի քաղաքական գաղափարների, քաղաքական-հասարակական կյանքում մարդիկ բոլորն էլ հավասար են և առանց որևէ աստիճանական խտրականության և դասակարգման կարող է մասնակցել հասարակական ճակատագրի ձևավորմանը և անգամ խարդավանքի դեպքում, պարտավոր են բողոքարկել մինչև իսկ մուսուլմանների առաջնորդի դեմ: Ընդհանուր առմամբ, Իմամ Խոմեյնու քաղաքական վարքագիծն ու կառավարման գաղափարները արտացոլված են Իսլամական Հանրապետության և նրա սահմանադրական կանոնակարգում: Ուստի կրոնական բովանդակության հիմնաքարը ստեղծվեց և հզորացավ մարդկանց մասնակցության շնորհիվ:

գ) Իմամի քաղաքական վարքագծի համեմատությունը դեմոկրատիայի նմուշների հետ

Մանրամասն զննելով Իմամ Խոմեյնիից մեզ հասած աշխատություններն ու գրավոր աղբյուրները՝ բացահայտում ենք, որ ժողովրդավարական իշխանության մասին խոսելիս նա երբեք չի օգտվել դեմոկարտիա, դեմոկրատական և այլ բառերից, քանի որ խուսափել է նմանատիպ արևմտյան ծագումով արտահայտություններից ու գաղափարներից:

«Իսլամը դեմոկրատական չէ, այլ բարձր՝ ամեն տեսակ դեմոկրատիաներից: Իսլամական դեմոկրատիան արևմտյան դեմոկրատիայից առավել կատարյալ է: Դեմոկրատիան նշված է իսլամում»:

Վերոհիշյալ նախադասություններին ուշադրություն դարձնելով, պարզ հասկանալի է, որ Իմամ Խոմեյնին դեմ չէ դեմոկրատիայի հիմունքներին, այլ խոսքի և մտքի ազատությունը, ինչպես նաև մարդկանց միջամտությունը ապագայի ձևավորման հարցին՝ համարում է կատարելապես կրոնական և իսլամական:

Այսպիսով, մարդկանց մի որոշ խումբ աշխատում է, որպեսզի տարբերակվեն Իմամ Խոմեյիի կառավարությանը վերաբերվող գաղափարները և տարանջատվեն դեմոկրատիայի սկզբունքներից: Ի պատասխան նրանց պետք է նշել, որ դրանք Իմամ Խոմեյնու առաջարկությամբ և քվեով նշված են և պահպանվում են սահմանադրական օ-

ռենսդրության մեջ: Բոլոր քաղաքական և հասարակական հարցերը իրականացվում են մարդկանց անմիջական և ոչ անմիջական միջամտությամբ: Պետք է ուշադրություն դարձնել նաև մեկ այլ նշանակալից փաստի վրա, իսկ դա դեմոկրատիայի տարբեր ընթերցումներն են դեմոկրատական իշխանություններում, իշխանության տարաչափերի տեսակետից, բնակիչների որոշումների և գործողությունների տարատեսակները տարբեր են: Եվ յուրաքանչյուր երկրում, ելնելով նրան յուրահատուկ մշակույթից և պայմաններից, ի գործ է դրվել դեմոկրատիայի մի տեսակ: Դեմոկրատիան ունի տարբեր տարատեսակներ, որոնք բազմազան են և բազմապիսի: Ուրեմն ինչպե՞ս կարելի է նրա մի տարրատեսակը դարձնել համընդհանուր չափանիշ: Որտե՞ղ և ինչպե՞ս է գրված, որ արևմտյան դեմոկրատիան ամենաճիշտ և ամենակատարյալ դեմորկատիան է և մենք պետք է արևմտյան դեմոկրատիան նույնությամբ գործի կոչենք ամեն տեղ և նրանից կախվածության մեջ լինենք: Մենք ընդունում ենք այն դեմոկրատիան, որը սազական է մեր դպրոցին: Մեր դեմոկրատիան ոչնչով նման չէ արևմտյան դեմոկրատիային:

Ուստի եթե իսլամի հետ դեմոկրատիայի անսազականության պատճառը արևմտյան դեմոկրատիան է, ապա մենք չենք ափսոսում նման վարչակարգից խուսափելուց: Քանի որ այն պատշաճ չենք համարում և եթե ասվում է, որ դեմոկրատիան չի կարող համատեղվել կրոնական իշխանության հետ, ապա դա ճշմարիտ չէ: Ըստ Իմամ Խոմեյնու դեմոկրատիայի այն տարրերը, որոնք պատշաճ չեն իսլամին բացառվում են և դրա վառ օրինակը իսլամական հանրապետությունն է կամ կրոնական դեմոկրատիան:

Հնարավոր է, որ մեզ անհրաժեշտ դեմոկրատիան նման լինի արևմտյան դեմոկրատիաներին, սակայն այն դեմոկրատիան, որ մենք ենք ուզում ստեղծել, գոյություն չունի: Իսլամական դեմոկրատիան արևմտյան դեմոկրատիայից ավելի կատարյալ է:

First Session

* Opening speech of the Seminar by the President of National Academy of Sciences of the Republic of Armenia, Academician Mr. Fadey Sargsian-------9
* The speech of His Excellency Ambassador of I.R.I in Armenia Mr. Mohammad farhad Koleini----------10
* The presentation of the message of His Holiness Catholicos of All Armenians Garegin II by Bishop Yezink Petrossian---------- 11
*Lecture by Nersess Archbishop Pozapalian on "The role of Imam Khomaini in the establishing of I.R.I."----------13
* Speech of Deputy Minister of Culture of the RA Mr. Karen Aristakesian------15
* Lecture of the head of Department of Iranian Studies, Yervan State University, Professor Garnik Asatrian on "Personality and character of Imam Khomaini and culture"---------- 17
* Lecture of Cultural Counselor of the I.R.I in Yerevan Mr. Mohsen Aboutalebi on "Imam Khomaini and culture"----------22
* Lecture of the proffesor of Scinetific-educational center of the National Academy of Sciences of Armenia, Mr. Alexander Manasyan on "The Political Views of Imam Khomaini and Iran's foreign policy"---------- 27
* Lecture of Mrs. Hermine Naghdalian on "The role of women in Iran after revolution"---------- 31

Second Session

* Lecture of the President of the Armenian Union of Writers, Mr. Levon Ananyan on "The influence of Imam Khomaini on Iran's post-revolution literature"-------38
* Lecture of the Leader scientific worker of Institute of Oriental Sciences, National Academy of Sciences of Armenia, Mrs. Armanoosh Kozmoian on the "Politics of Imam Khomaini in the context of Iranian literature traditions"--------41
* Lecture of the President of armenia - iranian Cultural Club "MIHR" Mr. Vaghinak Sargsyan on "Imam Khomaini on Science and education"----------45
* Lecture of the Head of Dpt. of Medicine of the Yerevan State Pedagogical University, Mr. Hakob Grigoryan on "Imam Khomaini and the West"----------49
* Lecture of the Chief editor of the"MIHR" journal, Mr. Manouk Manoukyan on "The revolutionary aspect of Imam Khomaini's Philosophy"----------54

• ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմեկոս Ֆադեյ Սարգսյանի բացման խոսքը----------9
• Երևանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամադ Ֆարհադ Քոլեյնու ելույթը----------10
• Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ուղերձի ընթերցումը միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տեր Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի կողմից----------11
• Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական մարմնի տնօրեն Գերաշնորհ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան. «Իման Խոմեյնու դերը ԻԻՀ կազմության ճանապարհին»---------- 13
• ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Կարեն Արիստակեսյանի ելույթը----------15
• ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյան. «Իման Խոմեյնին՝ որպես սնհատականություն»----------17
• ԻԻՀ դեսպանության մշակույթի խորհրդական Մոհսեն Աբութալեբի. «Իման Խոմեյնին և մշակույթը»----------22
• ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի պրոֆեսոր, Ալեքսանդր Մանասյան, «Իման խոմեյնու քաղաքական հայացքները և ԻԻՀ արտաքին քաղաքական ուղեգիծը»----------27
• Աժ պատգամավոր, Հերմինե Նաղդալյան. «Կանանց դերը Իրանում»------31

Երկրորդ նստաշրջան

• ՀՀ ԳՄ նախագահ Լևոն Անանյան. «Իման Խոմեյնու ազդեցությունը Իրանի հետհեղափոխական գրականության վրա»----------38
• ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Արմանուշ Կոզմոյան. «Իման խոմեյնու պոեզիան պարսից գրականության ավանդույթների համատեքստում»----------41
• Հայ իրանական մշակութային «ՄԻՀՐ»ակումբի նախագահ Վաղինակ Սարգսյան. «Իման Խոմեյնու խոհերը գիտության և կրթության մասին»----- 45
• Երևանի պետական մանկավարժական համալսարանի բժշկագիտության ամբիոնի վարիչ Հակոբ Գրիգորյան. «Իման Խոմեյնին և արևմուտքը»------ 49
• «ՄԻՀՐ» ամսագրի գլխավոր խմբագիր պր-ն Մանուկ Մանուկյան. «Իման Խոմեյնու փիլիսոփայության հեղափոխականությունը»----------54